№ 63 — ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ — № 6

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը:

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:

Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

АРДЗАГАНКЪ
Вѣна (Австрія)
Rédaction de la Revue „Hantess“
Mechitaristengasse 4.

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վերամիոնսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція "Ардзаганкъ". Իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armènien „Ardzagang“

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Այդ սպասելի էր:
Հայկական ռէֆօրմներ:
Հայկական հարց:
Մռայլ կէտեր:
Հայկական ռէֆօրմների ծրագիր:
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհափառ Կաթողիկոսի առողջութիւնը: Մէօր էջ. Գրէյը հայկական հարցի մասին: Պետութիւնները և Բ. Դուռը: Երկիւղը Պօլսում: Բեռլինից: Կ. Պօլսից: Պետութիւններին տալիք պատասխանի ուշանալու պատճառը. Կարսի երկաթուղու մասին: Իշխ. Խիլկովի Թիֆլիզ գալը: Հրդեհի դէմ փոխ. ապահով. ընկ. ընդհ. ժողով: Փոստ-հեռագրական բաժանմունք Հաջիքէնդում: Թիֆլիզի օրիորդաց առաջին գիմնազիա աւարտողներ: Անդրկովկ. օրիորդաց Ինստիտուտի տարեկան հանդէսը: Բարձր սրբազան աբբեպ. Սուքիաս Պարգևեանց: Նամակներ խմբագրութեան: «Մուրճի» նոր ուղղութիւնը:
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Վանից:
ՖԵԼԻԵՏՕՆ. — Ռուսիոյ օգոստափառ կայսրների ցոյց տուած ընդունելութիւնը ամենայն Հայոց կաթողիկոսներին:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԱՅԴ ՍՊԱՍԵԼԻ ԷՐ

Պատմական օրէնքը անողոք է. երբ նորա կործանիչ դատավճռին ենթարկւում է այս կամ այն ազգը, մարդկային ոչ մի ոյժ նորան փրկել չէ կարող: Աւելի քիչ ընդունակ է հանդիսանում ինքնափրկութեան պատմական դատավճռով դատապարտուածը. Նա կորցնում է իւր ամենատարրական շահերը հասկանալու և իւր գոյութեան վերջին յենակէտը պաշտպանելու ընդունակութիւնը:

Այդ անողոք պատմական օրէնքը մի անգամ ևս արդարանում է Տաճկաստանի վերաբերմամբ: Օսմանեան պետութիւնը շնորհիւ իւր բնած հակաքաղաքակրթական ուղղութեան վաղուց պատմութիւնից դատապարտուած է վերջնական անկման, որին քայլ առ քայլ մօտենում է նա դարուս ընթացքում, չնայած այն անբնական և հակապատմական օգնութիւններին, որ Տաճկաստանը յաճախ ստացել է զանազան կողմերից:

Ամբողջ արևմտեան Եւրոպան 56 թուականին զօրեղ պաշտպան հանդիսացաւ Տաճկաստանին, ուղեց բուժել «հիւանդ մարդուն», առաջարկեց այնպիսի ռէֆօրմներ մտցնել Տաճկաստանում, որոնցով կազմալուծուող այդ պետութիւնը պիտի կազդուրուէր: Այդ ձևով մի առ ժամանակ յետաձգուեց Օսմանեան կայսրութեան անկումը: Արդեօք որևէ աստիճանի խելքի եկաւ Թիւրքիան, հասկացաւ, որ իւր հակաքաղաքակրթական ընթացքով նա գնում է դէպի վերջնական անկումը, ուղեց փոխել իւր ուղղութիւնը:

Ամենեւին ոչ. ոչ մի բարենորոգութիւն, ոչ մի փոփոխութիւն նա չըմտցրեց իւր կայսրութեան մէջ և 56 թուականից յետոյ էլ նա շարունակեց նոյն մոլար և բռնակալական ընթացքը, որ հասցրեց նորան 76-78 թուականների ծանր փորձանքներին: Մօտ էր այդ ժամանակ Օսմանեան կայսրութեան վերջին քայքայման ժամը. սակայն նորից—և ենթադրելի է՝ մի վերջին անգամ—նա աջակցութիւն գտաւ արևմտեան Եւրոպայի, մանաւանդ Անգլիայի՝ Տաճկաստանի այդ վաղեմի պաշտպանի և բարեացակամի կողմից: Սակայն Եւրոպան ընդհանրապէս և Անգլիան մասնաւորապէս իրենց աջակցութիւնը պայմանաւորեցին մի առաջարկութեամբ, որ Տաճկաստանը անյապաղ բարենորոգութիւններ մտցնէ այն երկիրներում, ուր քրիստոնեայ ազգաբնակութիւն կայ: Հայաստանի, Մակեդոնիայի, Կրետէ կղզու, Լիբանանի վերաբերմամբ Տաճկաստանը ենթարկուեց միջազգային պարտաւորութիւնների, որ անյապաղ բարենորոգէ այդ երկիրները:

Արդեօք նորից որևէ խրատ եղաւ Տաճկաստանին, զգա՞ց նա, հասկացա՞ւ, թէ ինչ է իւր փրկութեան դարմանը և որո՞նք են քայքայման պատճառները:

Ամենևին ոչ. Տաճկաստանը չհասկացաւ, որ պէտք է վերջ տալ իւր մոլար վարչական ուղղութեան, բռնակալ, հակաքաղաքակրթական ընթացքին և սահմանել օրինականութիւն, ապահովել քրիստոնեաներին մարդավայել կեանքի պայմաններ ու այդպիսով իւր վերջնական անկման առաջն առնել:

Բեռլինի դաշնադրութեան համաձայն Օսմանեան կառավարութիւնը պարտաւորուած է անյապաղ բարենորոգութիւններ մտցնել Հայաստանում և այդ մասին հաշիւ տալ Եւրոպային: Այդ բարենորոգութիւնները ամենից առաջ նպաստաւոր են Տաճկաստանի պետական շահերին, եթէ կուլտուրական, և ոչ մուսուլմանական բռնակալութեան աչքով նայենք պետական շահերի վրայ:

Ըմբռնե՞ց Տաճկաստանը Եւրոպայի այդ փրկարար և անպայման բարեացակամ պահանջը. հասկացա՞ւ նա, թէ ինչ պայմանով նա վայելեց Եւրոպայի օգնութիւնը 76—78 թուականներին, որ օրհասական պիտի լինէին նորա համար:

Ամենևին ոչ. Տաճկաստանը ոչ միայն մազի չափ չբարւոքեց իւր քրիստոնեայ հպատակների դրութիւնը, ընդհակառակ՝ տասն և եօթը տարուայ իւր աւելի բռնակալական, քան նախորդում ընթացքով, «սպանութիւնների, թալանումների և յափշտակութիւնների ընթացքով» ինչպէս անուանում է «Daily News» լրագիրը, քայքայման աստիճանի հասցրեց մի ամբողջ քրիստոնեայ ազգ, որի արեան քրտինքով ապրում է ծուլութեան և հարեմական կեանքի անձնատուր եղած իսլամական տարրը:

Եւ ինչ խայտառակ ծաղր Եւրոպայի բարեացակամ և փրկարար խորհուրդների փոխարէն: Եւրոպան պահանջում է բարենորոգութիւններ մտցնել Հայաստանում, ապահովել Հայերի կեանքը, գոյքը, պատիւը, ընտանեկան մաքրութիւնը և նրանց զարգացման միջոցները... Իսկ Տաճկաստանը ի պատասխան դորա նախամշակուած ծրագրով աշխատում է բնաջինջ անել Հայերին իւր հայրենի երկրից, ինչպէս ապացուցեց այդ պրոֆեսոր Դիլօնը:

Բոլորովին նոյն ոգով, նոյն հետեւողութեամբ վարւում է այսօր սուլթանի կառավարութիւնը՝ մերժելով երեք պետութիւնների առաջարկած բարենորոգումների ծրագիրը, որի ոգին և ուղղութիւնը վերին աստիճանի բարեացակամ են դէպի Թիւրքիան:

Կարդալով այդ ծրագիրը, չէ կարելի չխոստովանել, որ երեք պետութիւնների ներկայացուցիչները աւելի շատ են մտածել սուլթանի իրաւունքները պաշտպանելու մասին, քան տաճկահայերի անտանելի վիճակը բարւոքելու:

Բոլոր վերանորոգութիւնները պիտի լինէին սուլթանի պաշտօնեաների և հպատակների ձեռքով և սուլթանի անունով:

Սակայն մի նորութիւն է մտցնում ծրագիրը. Եւրոպան պիտի վերահսկողութիւն—կօնտրօլ պահէ, որ ծրագրած օրէնքները չմնան իբրև մեռեալ տառ: Այդ է ծրագրի ամենաէական կէտը և Հայերի միակ յոյսը, թէ նոքա որևէ ապահովութիւն և պաշտպանութիւն կգտնեն իրենց մարդկային իրաւունքների:

Եւ ահա այդ միակ կարևոր կէտի դէմ յանդուգն կերպով բողոքում է տաճկական կառավարութիւնը...

Տաճկաստանը չէ կամենում ճանաչել ամենևին Հայաստանը, կամ հայկական եօթը նահանգները առանձին: Նա ուզում է բարենորոգութիւններ մտցնել բոլոր Տաճկաստանում, կարծես թէ նորան այդ արգելող կայ, որ բարենորոգութիւնները գործադրէ իւր մնացեալ երկիրներում:

Տաճկաստանը չէ կարող նահանգապետներ, գաւառապետներ և այլ պաշտօնեաներ նշանակել Եւրոպայի հաւանութեամբ: Այո, դա անհնար է Տաճկաստանի համար, որովհետև Եւրոպան չի համաձայնի Չէքքի փաշաների նման կառավարիչ նշանակելու, որոնց ձեռքով կըհեշտանայ հայոց ազգը բնաջինջ անելու ծրագրի իրագործելը:

Տաճկաստանը չէ կամենում ոչ գլխաւոր կօմիսէր, որ հսկէ բարենորոգութիւնները իրագործելու ժամանակամիջոցում, ոչ ժանդարմերի, որ պաշտպանէ քրիստոնեայ ազգերին քրդերի և չերքէզների դէմ:

Վերջապէս Տաճկաստանը չէ ընդունում ոչ հարկահանութեան կանոնաւորում, ոչ դատարանական և վարչական բարեփոխումներ, ոչ Եւրոպայի կօնտրօլ...

Այո, կարդալով «Berliner Tageblatt»-ում տպուած Տաճկաստանի պատասխանը, մենք համոզւում ենք, որ նա ամենևին չէ կամենում իրագործել Բեռլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածը. Նա ժխտում է անգամ բարենորոգումներ պահանջելու Եւրոպայի իրաւունքը. այդ նոյն է, թէ Տաճկաստանը միանգամայն ժխտում է Բեռլ. Դաշն. 61 յօդուածի գոյութիւնը: Մինչև ուր...

Սակայն հազիւ թէ այդպիսի հեշտութեամբ պրծնի Օսմանեան կառավարութիւնը: Պետութիւնների պահանջը անյապաղ բարենորոգութիւններ մտցնել Հայաստանում և հաշիւ տալ Եւրոպային մի կամայականութիւն չէ նորանց կողմից, այլ միջազգային դաշնագրերի վրայ հաստատուած իրաւունք:

Եւ, համոզուած ենք, Եւրոպան միջոց կը գտնի իւր իրաւունքները իրագործելու և աւելի զօրեղ միջոցներ, քան բարեկամական խորհուրդը: Իսկ տաճկական կառավարութեան այս անխոհեմ քայլը կ'անջատէ նորանից և այն փոքրաթիւ բարեկամներին, որոնք դեռ ևս գոյութիւն ունեին Եւրոպայում:

N. N.

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐ

(«Daily News»-ի առաջնորդող յօդ. յուն. 6)

Առ այժմ մենք սպասում ենք Բ. Դրան լիակատար պատասխանին, որ նոյն իսկ մեր կառավարութիւնը տակաւին ստացած չէ: Մենք առանձին կարևորութիւն ենք տալիս պետութիւնների առաջարկած այն ծրագրին, որ այսօր լոյս ընծայում ենք: Դա ոչ միայն ռէֆօրմների պահանջումն է, այլ մի պատրաստի ծրագիր այն վերանորոգութիւնների, որի ընդունելու կամ մերժելու մասին սուլթանը պիտի պատասխան տայ: Դա գեղեցիկ ծրագրած մի սխեմ է, որի մանրամասն մշակուած բովանդակութիւնը թելադրում է մեզ մի անսահման հաւատ դէպի ծրագրողների համբերութիւնը և վկայում է նոցա քաջ ծանօթ լինելը խնդրին: Այդ մշակուած կանոնները մի քանի փոփոխութիւններով հանդերձ կարող են ծառայել իբրև բարենորոգութիւնների կանոնագիրք (խարտիա) ոչ միայն Հայաստանի, այլ և ամբողջ տաճկական կայսրութեան համար: Այն պարզ սկզբունքները, որոնց հիման վրայ մշակուած են ծրագրի բազմաթիւ մանրամասնութիւնները, վերին աստիճանի դիւրըմբռնելի են և առողջ դատողութեան արգասիք:

Դիւանագիտութեան այդ պաշտօնեաները յօրինել են մի նշանաւոր, թէև բարդ վարչական կազմակերպութիւն փոխանակ այժմեան Տաճկաստանում տիրապետող սպանութեանց, կողոպուտների ու յափշտակութեանց սիստեմին: Նոքա բոլոր դժուարութիւնների առաջն են առել ղեկավարուելով կրկնակի կօնտրօլի սկզբունքով: Ամեն տեղ, ուր հայ քրիստոնեաները ենթարկուած են մահմեդական իշխանապետներին, նոցա հետ պիտի լինին քրիստոնեայ պաշտօնակիցներ: Ծրագիրը երբեմն քրիստոնեայ իշխանաւորին երկրորդական դեր է տալիս և յաճախապէս այնտեղ, ուր այն կրօնական շահերը, որոնց նա ներկայացուցիչ է, հանգիստանում, երկրորդական տեղ են բռնում այլ խնդիրների շարքում: Երբեմն էլ քրիստոնեայ իշխանաւորը ներկայանում է և գլխաւոր պաշտօնեայ այնտեղ, ուր քրիստոնեայ մեծամասնութիւն կայ:

Բայց ամէն մի դէպքում մի կրօնի պատկանող իշխանաւորին նշանակւում է միւս կրօնի դաւանող պաշտօնակից: Այս սկզբունքն անփոփոխ պահպանուած է սահմանադրուած բոլոր կանոններում: Նա գործադրուած է թէ մեծ խորհուրդներում, կամ կօմիտէտներում և թէ փոքրերում: Մինչև անգամ այն դէպքերում, ուր ըստ երևոյթին ծրագիրը շեղւում է այդ սկզբունքից—այն վարչութիւններում, որոնք անմիջապէս ենթարկուած են Բ. Դրան, այնտեղ ևս պահպանուած է նոյն սկզբունքը, որովհետև պետութիւնների ներկայացուցիչներին է տուած ամբողջ իշխանութիւնը:

Այդ կանոնները լիովին արժանի են հայոց բարեկամների և տաճկական ռէֆօրմների բոլոր կուսակիցների ամենալուրջ ուշադրութեան: Այն թիւրիմացութիւնները, որոնց ծրագիրը կարող է առիթ տալ, բնաւ չեն կարող հերքման կամ պարսաւանքի բնաւորութիւն ունենալ. նոքա միայն կարող են ապացոյց լինել, թէ այդ կանոնները այնքան բնախի են, որ անկարելի է դոցա գործադրել Թիւրքիայում և Թիւրքերի ձեռքով: Մենք դժուարանում ենք երևակայել, որ Դուռը յօժար լինէր պետութիւններին հաղորդել ամեն մի նշանակած վալիի անունը: Չենք կարող երևակայել և մի վալի, որ խորհրդակցելիս լինի ընտրուած միւդիրի, ընտրուած խորհրդի հետ և միևնոյն ժամանակ հսկելիս լինի, որ ընտրութիւնները օրէնքի համաձայն կատարուին: Նոյնպէս դժուարանում ենք հաւատ ընծայել թափառաշրջիկ քրդերին նստակեաց դարձնելու ձգտմանը, կամ հաշտարար և միջնորդական դատարան հաստատելու ցանկութեանը՝ տեղական վէճերը քննելու համար: Բաւական է ինկատի առնել սոցա մի քանիսը ուշադրութեամբ, որ հասկանանք դոցա իրագործման մեծամեծ դժուարութիւնները տաճիկների ձեռքով:

Այն հիմնարկութիւնները, որոնք հայերին ապահովում են առաջաւոր քաղաքակրթութեան բոլոր արգիւնքները, միևնոյն ժամանակ պահանջում են, որ նորանք, որոնցից հայերը կախում ունին, չղեկավարուին կրօնի տարբերութիւններով:

Կարելի է արդեօք այդքան նոր գինի ածել դագիի արդարադատական և բարոյ գործակալների վարչական հին տիկերի մէջ: Միայն ժամանակը կարող է այդ ցոյց տալ:

Այնու ամենայնի պետութիւնները ծանրակշիռ փաստերով ցոյց տուին իրանց բարի ցանկութիւնը և հաստատամտութիւնը, և եթէ նոքա իրաւացի ամբողջ Եւրոպայի ներկայացուցիչ հանդիսանան, խնդրի վերջնական լուծումը կը լինի նորանց ձեռքում:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(«Պետերբ. Վեդ.» մայիսի 31)

Երեք մեծ պետութեանց դեսպանների Բ. Դրան յանձնած մեմօրանդումի բովանդակութիւնն արդէն յայտնի է հեռագիրներից, անյայտ չէ և Անատօլիի հայ նահանգներում գործադրելի բարեփոխութեանց ծրագիրը:

Ս. Պետերբուրգի, Փարիզի և Լօնդօնի կառավարութիւնները կարող էին ընտրել գործողութեան երկու եղանակ՝ նոքա կամ կարող էին բաւականանալ ձևակերպելով երկու կամ երեք էական յօդուածներ, որոնց հիման վրայ սուլթանի նախաձեռնութիւնը կ'արտայայտուէր ապա աւելի կամ պակաս ինքնուրոյնութեամբ և կամ պիտի կազմէին վարչական բարեփոխութեանց կատարեալ օրինագիրը: Մի խօսքով նոքա կարող էին ընտրութիւն անել՝ մինչև ամենասահմանափակը հասցրած՝ «իրաւունց պահանջման» և մանրամասն և լիակատար կանոնադրութեան հրատարակութեան մէջ: Առաջին հայեացքով կարծես առաջին միջոցը շատ աւելի նախապատուելի էր: Ձախակից պետութիւններն, անշուշտ, այսպիսով թեթևացրած կը լինէին իրանց գործը՝ Դրան ուշադրութիւնը դարձնելով փոքրաթիւ ամենակարևոր բարեփոխութեանց վերայ: Բայց ինչպէս երևում է, նոքա կամեցել են մի կողմից հետևել եղած օրինակին, այն է արևելեան Ռումելիայի կանոնադրութեան և միւս կողմից կամեցել են որոշ մանրամասնութեանց հաստատութեամբ առաջն առնել Տաճկաստանի շեղմանը իւր ստանձնած գրական պարտականութիւններից:

Բայց քանի որ վերջին հայեցակէտը յաղթող եղաւ, անհրաժեշտ էր համոզել սուլթանին ընդունելու այն: Հենց վերջին նպատակին հասնել ձգտում էին երեք մեծ պետութեանց դեսպանները դարմանալի համերաշխութեամբ: Ըստ երևոյթի հէնց այն իրողութիւնը, որ Ռուսաստանը մի կողմից ձեռք ձեռքի տուած Ֆրանսիայի հետ և միւս կողմից Անգլիայի հետ է գործում, պէտք է վճռական ազդեցութիւն գործէր Բ. Դրան վրայ, հանգստացնելով միևնոյն ժամանակ շատ զգայուն և կասկածոտ ֆրանսիացի հայրենասէրներին, որոնք իրանց յարձակման կէտ նպատակի են ընտրել վերջին ժամանակ պ. Գանոտոյի զգոյշ և շրջանկատ քաղաքականութիւնը:

Ի դէպս չէ կարելի չնկատել, որ դեսպանագիտութեան գործը կրկնապատիկ կերպով բարդվում է, երբ նա գործել է պարտաւորվում ժողովրդապետութեան իշխանութեան ժամանակ, հասարակութեան աչքի առաջ, որ ամեն ինչ գիտենալ է ցանկանում և որ կարծում է, թէ ամեն ինչ գիտէ, մինչդեռ նա իսկապէս չգիտէ նոյն իսկ միջազգային ամենատարրական պայմանները: Հէնց այսպիսի վիճակի մէջ է ֆրանսիական կառավարութիւնը: Բայց այս կողմնակի խնդիր է: Իսկ նշանաւոր է այն, որ Բեռլինի դաշնադրութիւնը կարգադրել է, որ Հայաստանում պէտք է գործադրուեն որոշ բարենորոգումներ և նա եւրոպական պետութիւններին յանձնել է հսկողութեան իրաւունք, իրաւացի է այդ թէ անիրաւ, ներկայումս դա նշանակութիւն չունի: Մեզ համար նշանակութիւն ունի այն, որ 1878 թուականին մի քանի պետութեանց ոչ միայն իրաւունք է տրուած, այլ և նոյն վրայ որոշ պարտականութիւններ են դրուած: Ուստի և նոքա վճռապէս չէին կարող մերժել Հայերի բողոքներն ու պաղատանքները:

Վերջին հանգամանքը հիմնաւոր կերպով փոխում է իրերի վիճակը: Ոչ Պետերբուրգում, ոչ Փարիզում և ոչ էլ Լօնդօնում չէին կարող անտարբեր հանդիսատես մնալ այն դէպքերին, որոնք սպառնում էին ոչ միայն հայերին, այլ և նոյն իսկ Օսմանեան պետութեան ամբողջութեան և անձեռնմխելիութեան:

Եթէ հարկ է արդարացած լինել, պէտք էր յարձակուել 1878 թուականի քաղաքականութեան վրայ և ոչ թէ սորա բնական և տրամաբանական հետևանքի վրայ: Վերջ ի վերջոյ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան պահանջում են Բ. Դռնից միայն մի բան, այն է Հայաստանի քրիստոնեայ բնակիչների հասարակական յարաբերութեանց, կայքի և կեանքի ապահովութիւն և երաշխաւորութիւն: Եթէ մտածելու լինինք, որ տաճիկ կառավարութիւնից պահանջում են միայն, որ նորա քրիստոնեայ հպատակները մահմեդականների հետ հաւասար իրաւունքներ վայելեն և որ բոլոր անցեալը մոռացութեան տրուի, մենք պարտաւոր կը լինինք խոստովանելու որ ծրագիրը շատ համեստ է, մինչև անգամ չափազանց համեստ է:

ՄՈՒՑԼ ԿԼՑԵՐ

(«Neue Freie Presse», 6 Iuni)

Արեւելքի քաղաքական հորիզոնում մասյ կէտեր են երեւում.—Նախ ամենա-չարագուշակը՝ հայկական ռէֆորմները, ապա Զիդդայի ապանութիւնները, յուզմունք Մակեդոնիայում, հաւանական յուզմունք Ասորիքում և ոստիկանութեան յարձակումն եւրոպական յանձնաժողովի վրայ Մուշում։ Վերջինս, ինչպէս հեռագիրը հաղորդեց, հետեւեալ դէպքն է ներկայացնում. եւրոպացի պատուիրակների հայ ծառայ ոմն Սեդրաք Չաքըրճեան մի այլ հայի, Սարգիս անունով, ծեծում է, և սա դիմում է ոստիկանութեան օգնութեան։ Վերջինս իւր պաշտօնեաներից մէկին, Ռիզա էֆէնդուն, յանձնարարում է յանցաւորին բանտը բերել, բայց Ռիզան իրաւազանց գտնուելով երկու ժանդարմներով բռնի մտնում է պատուիրակների բնակարանը, և նրանցից պահանջում, որ նրան յանձնեն իրանց ծառային։ Իշխանութիւնը սորա համար Ռիզա էֆէնդուն բանտարկեց և դատի ենթարկեց։ Ոստիկանապետը և ժանդարմները պաշտօնանկ եղան։

Այս դէպքն այսպէս խաղաղութեամբ վերջացաւ, բայց և այնպէս դեռ մնում են բաւական հոգսեր, որոնք կարող են դառնացնել սուլթանի Բայրամը։ Այս միջոցում Լոնդոնում հրատարակուեցաւ այն մեմօրանդումը, որով երեք մեծ պետութիւնները առաջարկում են Բ. Դրան հայկական ռէֆորմների ծրագիրը։ Գլխաւոր պահանջներն արդէն վաղուց յայտնի են. բայց Դրան խակական պատասխանը դեռ եւս յայտնի չէ. միայն գիտեն, որ պետութեանց ռուսական պահանջների վերաբերութեամբ Բ. Դուռը մերժողական դիրք է բռնած, ասում և ենթարկւում է սպառնալիքների անգլիական մամուլի կողմից։

«Standard» լրագիրը յայտնում է, որ Բ. Դուռը միանգամայն մերժում է բարձրագոյն Կոմիսարի և խառն հսկող Յանձնաժողովի նշանակումը. Դուռը առաջարկում է ընդ նմին կէս դար առաջ կազմուած և միայն անուամբ գոյութիւն ունեցող Արեւմտեքի փաշայի օրէնսգրքի բովանդակած ռէֆորմները գործադրել, միեւնոյն ժամանակ համաձայնում է ներումն շնորհել բոլոր այն հայերին, որոնք վերջին դէպքերի առթիւ բանտարկուած են։ Վերոյիշեալ պահպանողական թերթը հաւանական է կարծում, որ մեծ պետութիւնները ծանուցագիրը կը վերադարձնեն և ժամանակամիջոց կը նշանակեն անպայման կերպով ընդունելու և հաստատելու համար իրանց առաջարկած ռէֆորմների ծրագիրը։ Եթէ ընդունելութիւնը որոշ ժամանակամիջոցում տեղի չունենայ, խիստ միջոցների ձեռնամուխ պիտի լինեն, որ նախապէս կը կայանայ նաւատորմղային ցոյցի մէջ Վոսփորում։ Այս ցոյցի ակըդբնաւորութիւնը Մեծ Բրիտանիային կը վերաբերի։ Բրիտանական Միջերկրական ծովի նաւատորմղի Բէյրութ ժամանելը այս բանակից ընթացքի նշան է։

Սուլթանը կամ պէտք է ընդունի պետութեանց առաջարկութիւնը և կամ Հայաստանը կը բաժանուի Օսմանեան պետութիւնից և կը կազմէ ինքնուրոյն նահանգ մեծ պետութիւնների պաշտպանութեան և հովանաւորութեան ներքոյ։ Նախարարական «Daily News»-ի կարծիքն այն է, թէ մեծ պետութեանց համաձայնութիւնը կատարեալ է, ապա թէ ոչ նոցանից մէկը Բ. Դրան պատասխանը ստանալուց առաջ չէր շարժիլ տեղից իւր նաւատորմիղը։ Առայժմ Լոնդոնում պէտք է համբերութիւն պահպանել, որովհետեւ ոչ Սուլթանը և ոչ էլ տաճկական դեսպանակութիւնը Բայրամի օրերը պետական գործերին նուիրելու տրամադիր չեն կարող լինել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԷՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

որ կազմել են Մեծ-Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները և ներկայացրել սուլթանին մայիսի 11-ին (ն. տ.) Կ. Պոլսում։

(ԼԻԱԿԱՏԱՐ ԲՆԱԳԻՐ)

ՄԵՄՕՐԱՆԴՈՒՄ

Մարտ-ապրիլ 1895 թ.

Սորան կից ծրագիրը պարունակում է այն փոփոխութիւնների ընդհանուր ձեւակերպութիւնը, որ անհրաժեշտ կը լինէր մացնել սորեւ յիշուած վիլայէթների վարչական, ելեմտական և դատաստանական կազմակերպութեան մէջ. օգտակար է դատուած մատնանիշ անել մի առանձին մեմօրանդումով մի քանի միջոցների վրայ, որոնք երկրի վարչական սահմանագրութեան սահմանից դուրս գալով հանդերձ, կազմում են այս ձեռնարկութեան հիմքը և որոնց ընդունելը Դրան կողմից առաջնակարգ կարեւորութիւն ունեցող մի գործ է։

Այս առանձին կէտերը հետեւեալներն են.

1) Վիլայէթների թուի պակասեցնելը ի դէպս կարեւորութեան։

2) Վալիների ընտրութեան երաշխաւորութիւն։

3) Ներումն (amnistie) այն հայերին, որոնք դատապարտուած են կամ բանտարկուած են քաղաքական յանցանքների համար։

4) Հայ էմիգրանտների և աքսորականների վերադարձ։

5) Այն յանցանաց դատերի վերջնական կարգաւորումն, որոնք ենթարկվում են ընդհանուր օրինաց ներգործութեան։

6) Բանտերի կարգի վերահսկողութիւն և բանտարկեալների վիճակի քննութիւն։

7) Նահանգների ռէֆորմների գործադրութեան վրայ հսկելու համար՝ մի Բարձրագոյն Կոմիսարի նշանակումն։

8) Մշտական կոնտրոլի մասնաժողովի հաստատումն Կ. Պոլսում։

9) Վարձատրութիւն այն հայերի կորուստների, որոնք Սասունում, Տալւորիկում և այլ տեղի ունեցած անցքերին զոհ գնացին։

10) Հաւատափոխութեան հետ կապ ունեցող խնդիրների կանոնաւորումն։

11) Հայերին տուած իրաւունքների և առանձնաշնորհումների ճիշտ պահպանութիւնը։

12) Ասիական Թիւրքիայի միւս նահանգներում հայերի դրութեան բարւոքումն։

ՎԻԼԱՅԷԹՆԵՐԻ ԹՈՒԻ ՊԱԿԱՍԵՑՆԵԼԸ.

I. Աչքի առաջ ունենալով, որ ռէֆորմները պէտք է սահմանուին Կարնոյ, Բիթլիսի, Վանի, Սըվասի, Մամուրէթ-Իւլ-Ազիզի և Դիարբէքիրի վեց վիլայէթներում,—անհրաժեշտ է ուսումնասիրել այդ նահանգների թուի պակասեցնելու խնդիրը։ Նոր բաժանումը, որ թոյլ կը տայ մի որոշ անտեսութիւն անել վարչութեան վրայ եղած ծախսերի նկատմամբ, կը դիւրացնէ թերեւս վալիների ընտրութիւնը, պակասեցնելով նոցա թիւը, ամրացնելով նոցա իշխանութիւնը և բարւոքելով նոցա նիւթական վիճակը։ Այս պէտք է իրագործուի այնպիսի եղանակով, որ ազգաբնակութեան բաժանումը վերածուի այնպիսի էթնօգրաֆիկական մասերի, որոնք իւրաքանչիւր նահանգի ստորաբաժանումների մէջ բառ կարելոյն համացեղ լինին։

Ծանօթութիւն լուսանցքի վըրայ—1875 թուից 10 տարի առաջ Էրզրումի շրջանը (eyalet) բաղկացած էր Չըլդըր, Կարս, Էրզրում (այժմեան վիլայէթը) այլ և Վան նահանգներից, որոնցից վերջինը բովանդակում էր Հէքքեարը, Բիթլիսը և Մուշը։ Այդ էյալէթը, 1877—78 թուականների պատերազմից յետոյ բաժանուեց 5 վիլայէթի և այն մասը, որ մընաց տաճկական իշխանութեան ներքոյ, բաժանուեց հետեւեալ վիլայէթների՝ Էրզրումի, Վանի, Հէքքեարի և Մուշի։ Այնուհետև Հէքքեարի նահանգը նորից միացուեցաւ Վանի վիլայէթին, իսկ Մշոյ նահանգը՝ նոր ստեղծուած Բիթլիսի վիլայէթին։ Նոյն ժամանակից նաև Մամուրէթ-Իւլ-Ազիզի սանջակը մի քանի գըղցի մասերի հետ վիլայէթ դարձաւ, իսկ Դերսիմի վիլայէթը կրկին սանջակի վերածուեց։

—

ՎԱԼԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ

II. Պետութիւնները, ահագին նշանակութիւն տալով վալիների ընտրութեան գործին, որոնցից գլխաւորապէս կախուած կը լինի Բեռլինի դաշնագրութեամբ նախատեսնուած ռէֆորմների իրականացումը (efficacité), որոշեցին ազդարարութիւններ անել Բարձր Դրանը իւրաքանչիւր անգամ երբ ընտրուեն այնպիսի անձինք, որոնց պաշտօնի նշանակելը կարող է վնաս պատճառել։ Այս պատճառով պետութիւնները անհրաժեշտ են համարում, որ կայսերական Օսմանեան Տէրութիւնը այս առթիւ ծագելիք թիւրիմացութիւնների առաջն առնելու համար, կիսապաշտօնական ձեւով ծանօթացնէր պետութիւնների ներկայացուցիչներին այն ընտրութեան հետ, որ մտադրութիւն կայ անելու։

—

ՆԵՐՈՒՄՆ
(amnistie)

III. Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանը պէտք է կատարեալ ներումն շնորհէ այն հայերին, որ մեղադրուած են կամ դատապարտուած են քաղաքական յանցանքների համար, բայց դատի չեն կոչուած այնպիսի քրէական յանցանքներին անմիջապէս մասնակցելու համար, որոնք նախատեսնուած են ընդհանուր օրէնքներով։

—

ՀԱՅ ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԵՒ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

IV. Ամէն մի հայ, ինչ կրօնի և պատկանէր, որ առանց դատաստանի աքսորուած էր Օսմանեան կայսրութեան այս կամ այն նահանգի սահմաններից դուրս, ուր նա ապրում էր, կամ որ ստիպուած էր գաղթել ապահովութեան պատճառով կամ երկիւղ կրելով որ պատժի կենթարկուի այնպիսի յանցանքների համար, որոնց մասնակից չէ եղել—թոյլտուութիւն պէտք է ստանայ ազատ կերպով վերադառնալ Թիւրքիա կամ այն նահանգը, ուր նա թողել է. առանց ճնշման տեղական իշխանութիւնների կողմից։ Բացի այս իւրաքանչիւրը պէտք է յետ ստանայ այն սեփականութիւնը, որ վայելում էր հայրենիքը թողնելուց առաջ։

—

ԴԱՏԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՒՈՐՈՒՄՆ

V. Այն բոլոր դատաստանական գործերը և քննութիւնները, որոնք վերաբերում են ընդհանուր օրէնքի նախատեսած յանցանքներին և ոճիրներին, պէտք է անյապաղ վերջանան։ Սորա համար իւրաքանչիւր վիլայէթ և իւրաքանչիւր սանջաքի գլխաւոր քաղաքը պէտք է ուղարկուին առանձին դատական յանձնաժողովներ, որոնք և վերջ կը տան անվճիռ մնացած դատերին։ Նոցա վճիռները անբողոքելի են։ Այս յանձնաժողովները պէտք է բաղկանան նախագահից և երկու ատեանի անդամներից՝ մէկը քրիստոնեայ և միւսը մահմեդական, դատական քննչից և դատախազից, որոնց մէկն էլ պէտք է քրիստոնեայ լինի։

—

ԲԱՆՏԵՐԻ ՎԻՃԱԿԸ

VI. Կ. Պոլսից պէտք է ուղարկուին բարձրաստիճան պաշտօնեաներ իւրաքանչիւր վիլայէթի բանտերը քննելու և նոցա նիւթական վիճակին և բանտարկեալների դրութեան ծանօթանալու համար, և թէ ինչպէս են նոցա հետ վարվում։ Նոքա կը ծանօթանան բանտապետների ու բանտապահների գործունէութեանց և կարող են հալածել, փոխել և դատի ենթարկել այնպիսիներին, որոնք բանտարկեալների հետ չեն վարուել օրէնքի հրահանգների համաձայն։ Այս բարձրաստիճան պաշտօնեաներից իւրաքանչիւրը կ'ունենայ օգնական, որ քրիստոնեայ պիտի լինի, եթէ առաջինը մահմեդական է և ընդհակառակն։ Չորս ամսից ոչ աւելի ուշ նոքա պէտք է ներկայացնեն իրանց եղած յանձնարարութեան վերաբերմամբ հաշիւ, ցոյց տալով այն փոփոխութիւնները և բարեփոխութիւնները, որ հարկ է մացնել բանտերի ծառայողների ու կազմակերպութեան մէջ։

—

ՀՍԿՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

VII. Նահանգապետներն իրանց նշանակուելուց յետ, իսկոյն պիտի գնան իրանց նահանգների գլխաւոր քաղաքները նոր ընդունուած հիմանց վրայ վարչութիւններ կազմակերպելու համար։ Նոքա կը զբաղուին կառավարութեան նշանակած միւթեսէրիֆների և կայմակամների հաստատութեամբ և իւրաքանչիւր կազայում նահիեների հողերի բաժանմամբ։ Նոյնպէս նոքա կազմում են ընտրողական ցուցակներ և ձեռնամուխ են լինում նահիաների խորհուրդների և միւդիրների ընտրութեան։ Նոքա հոգում են, որ անյապաղ ընտրուեն հարկաւքներ և որ թէ նահանգի եկամուտը և թէ հարկերի բաշխումն վարչական ստորաբաժանումների մէջ կատարուեն, որքան հնար է շուտով։ Այս բարեփոխութեանց շուտափոյթ և ճիշդ կատարման վրայ կը հսկէ առանձնապէս Նորին Մեծութիւնից՝ Սուլթանից նշանակած բարձրաստիճան անձն, որի ընտրութիւնը կը լինի պետութեանց հաւանութեամբ։ Իւր պաշտօնավարութեան բոլոր ժամանակ նա է լիազօր և անմիջական պետը նահանգապետների, որոնք պիտի բոլոր միջոցները գործ դնեն նոր կանոնադրութեան յաջողակ ներմուծման և գործադրութեան (Աւելի փաշայի 1889 թ. հոկտեմբ. 8-ի ծանուցագիրը «Բարեփոխութիւնք Հայաստանում» յօդ. I. մասն ա.)։

Բարձրագոյն Կոմիսարը կ'ընդունի խնդիրներ և ակնդիր կը լինի բնակիչների ցանկութեանց, և նրանց բաւարարութիւն կը տայ նոր կանոնադրութեան որոշած սահմանների մէջ։ Իւր յանձնարարութիւնը նա կը վերջացնէ նահանգների ընդհանուր քննութեամբ, և այս միջոցում նա պէտք է բարեփոխէ վիլայէթներում եղած կարգերը, որոնք համաձայն չեն նոր կանոնադրութեան։ Բարձրագոյն Կոմիսարը կ'ունենայ օգնական, որ քրիստոնեայ կը լինի, եթէ նա մահմեդական է և ընդհակառակն.

—

ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

VIII. Բարձրագոյն Դրան կից պէտք է կազմուի մշտական հսկող մասնաժողով, որ պէտք է հսկէ բարենորոգութեանց գործադրութեան վրայ։ Այդ մասնաժողովին կը նախագահէ կայսրութեան մի քաղաքական կամ զինուորական բարձրաստիճան պաշտօնեայ։ Մասնաժողովը կ'ունենայ և վեց անդամներ, որոնք կ'ընտրուին պետութեան բարձրաստիճան պաշտօնեաներից, որոնք հմուտ պիտի լինին վարչական, դատաստանական և ելեմտական գործերին։ Սոցանից երեքը պիտի լինին մահմեդական և երեք քրիստոնեայ։ Մասնաժողովը նիստ կունենայ Բ. Դրանը գոնէ ամիսը մի անգամ։

Նրա պարտականութիւնը կը լինի հսկել օրէնքների և կարգադրութեանց ճիշտ կատարման վրայ, հաստատել Բ. Դրան գիտութեան վարչութեան մէջ իւր նկատած ամեն անկարգութիւնները, մատնանիշ լինել այն պաշտօնատարների վրայ, որոնք չեն կատարում իրանց պարտականութիւնները, ընդունել խնդիրներ և քննել ժողովրդի խնդիրներն ու գանգատները, նոյնպէս և այն զեկուցումները, որ մասնաժողովը կարող է ստանալ ազգապետներից։ Մասնաժողովին կուղղեն իրանց թարգմանների միջոցով և դեսպանատներն իրանց հաղորդագրութիւնները և տեղեկութիւնները, որ նոքա կարեւոր կը համարեն։ Մասնաժողովը կարող է վալիներից հաշիւ պահանջել ամեն հարցերի վերաբերութեամբ և սոյա քննութեան համար նա կարող է և անձամբ կանչուել։ Տարին երկու անգամ նահանգապետները կը հաղորդեն մասնաժողովին մանրամասն հաշիւ բանտերի մասին։

Մասնաժողովը, երբ հարկաւոր համարէ, կարող է իւր անդամներից մէկին կամ մի քանիսին ուղարկել նահանգները զննելու համար։ Նա հաշիւ կը ներկայացնէ Բարձրագոյն Դրան բոլոր այս հարցերի վերաբերութեամբ և իրաւունք կը վայելէ անմիջական գրաւոր յարաբերութիւն ունենալու նահանգապետների և նախարարութեանց պաշտօնական գեկավարմանների հետ։

—

ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

IX. Սասունի, Տալւորիկի և այլ տեղերի դէպքերի ժամանակ հայերի կրած վնասները պէտք է հատուցանուին։ Այն հայերը, որոնք անձնական կամ նիւթական վնաս են կրել Սասունի, Տալւորիկի և այլ տեղերի դէպքերի միջոցին, կըստանան պատշաճ բաւարարութիւն և վարձատրութիւն։ Կայսերական բարձրագոյն Կոմիսարին յանձնած կը լինի այս ուղղութեամբ տեղեկութիւններ ժողովել և կարեւոր միջոցներ գործ դնել։

—

ԿՐՕՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

X. Բարձրագոյն Դուռը կը հսկէ, որ կրօնափոխութիւնը կատարուի այն ազատութեան հիման վրայ, որոնք ծագում են 1856 թուականի (յօդ. 10, 11, և 12) Հաթթի Հիւմայունին գծագրած սկզբունքներից և որոնք շատ յաճախ անտես են անում գործակատարները։ Այն անձինք, որոնք կամենում են հաւատափոխ լինել, պէտք է կատարելահասակ լինեն և կարող են խնդրատու լինել հաւատափոխութեան համար միայն մի շաբաթից յետոյ, որի ընթացքում նոքա պէտք է իրանց կրօնապետի հսկողութեան տակ գտնուեն։

—

ՀԱՅԵՐԻ ԱՐՏՕՆՈՒԹԵԱՆՑ ՊԱՀԱՆՋՈՒՄՆ

XI. Բ. Դուռը ճիշդ և որոշ հրահանգներ կը տայ իշխանութեանց որ չերկրնուեն խանգարումներ հայերի այն ի-

---

ՖԵԼԻԵՏՕՆ

ՌՈՒՍԻՈՅ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍՐՆԵՐԻ ՅՈՅՑ ՏՈՒԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻՆ

Ա.

Հեռագիրն արդէն հաղորդեց մեզ այն ազարման և սիրալիր ընդունելութեան մասին Պետերհօֆի պալատում, որին մայիսի 31-ին արժանացաւ Վեհափառ Հայրիկը Ռուսիոյ մեծանուն Պահակալի և Նորա Օգոստափառ Ամուսնոյ կողմից։ Ներկայ խորհրդաւոր ժամանակում այդ պատմական իրողութիւնը պիտի գրաւէ գրեթէ ամբողջ աշխարհի ուշադրութիւնը։ Հաւանական է, որ Բոսֆորի եզերքում սրտատրոփ սպասում լինեն այդ ընդունելութեան հետեւանքին...։ Սակայն և առանց քաղաքական մթնոլորտի մէջ խորասուզուելու, եղելութիւնն ինքն ըստ ինքեան շատ նշանաւոր է մեզ համար։ Հայաստանեայց եկեղեցւոյ պաշտելի Հայրապետը, իւր նախորդաց նման բերան դառնալով իւր հօտի, մատուցանում է մեծազօր Տէրութեան Պահօղքին Հայոց ազգի դարեւոր և անհուն հաւատարմութեան հաւաստիքը և ի սրտի պատմական ժամանակներից ազգիս ապացուցած անձնուիրութեան ու անկեղծ ծառայութեան — երկրպագու Կայսրը վստահութեամբ ուրախութիւն է յայտնում մեծ Հովուապետի տեսնելուն։ Այդ արքայավայել մեծարանքով և սիրալիր ընդունելութեամբ՝ Ռուսիոյ հզօր Տիրապետը այսօր դարձնում է պսակում 75 տարին բոլորած պատկառելի Ծերոյն Աստուծոյ, որ կէս դարուց աւելի շարունակ քարոզել է մարդկութեանը՝ խաղաղութիւն, եղբայրսիրութիւն և հեզութիւն ու միշտ լսել է փոխարէնը «'ի խաչ հանէք զդա»։ «Ի խաչ՝...» գոչած են իւրայինք, որոնց հայրաբար ուսուցել է սիրել եկեղեցին, ազգը և կրթութիւնը։ «Ի խաչ» հանելով վարձատրած է Քրիստոսի այս մեծ աշակերտին և այն ապերախտ պետութիւնը, որին անձնուիրաբար ծառայած է Նա ամբողջ իւր կեանքը միշտ անբաժան համարելով տէրութեան և հպատակաց շահերը։ Մահմեդական բռնակալութիւնը «խաչի» դատապարտեց և ի ծաղր քրիստոնէական աշխարհի՝ աքսորեց նորան այն սուրբ վայրերը, ուր Ինքը Փրկիչն էր խաչ հանուած։ Սակայն նախախնամութիւնը այլ եւս չտարաւ այդ ամբարշտութիւնը և ահա Հիւսիսային Հսկայն, այժմ ի Տէր հանգուցեալ Աղէքսանդր III, հետեւելով իւր բարեպաշտ նախորդաց օրինակին, անկեղծիւ եղաւ ազգիս միահաւան ձայնին ու հիւսիսից ձեռք կարկառելով, Իւր հաստատուն կամքով ազատեց Օսմանեան ճիրանից մեծանուն աքսորեալին, վերականգնելով ի գահ Ս. Գրիգոր Լուսաւորչի։ Այնուհետև, մինչ պաշտելի Հայրիկը, օրհնութեամբ ոտք դնելով Ռուսիոյ սահմանը, շտապեց իւր սուրբ օծումն առնելու, որպէսզի ապա խորին երախտագիտական զգացմունքով ներկայանայ իւր բարեպաշտ Կայսեր. վերին, անհասանելի տնօրէնութեամբ վրայ հասաւ երախտաւոր Թագաւորի ծանր տկարութիւնը և ապա վախճանը։

Եւ ահա, տխուր իրողութիւնից դեռ տարին չանցած, Հայոց ազգի Հայրապետը, լի երախտագիտական զգացմամբ թէ իւր և թէ իւր հօտի, փութաց այսօր հասանել Նորա գետի եզերքը՝ համբուրելու իւր բարեպաշտ հանգուցեալ Կայսեր շիրիմը և լիաբերան օրհնելու Նորա արժանաւոր ժառանգ Նիկողայոս II Կայսեր, հանդերձ Իւր ամբողջ Օգոստափառ Տամբ։ Երկրպագու Կայսրը, Իւր Թագուհւոյ հետ միասին, ըստ հեռագիրների, 20 րոպէի չափ սիրալիր ունկնդրութիւն է շնորհած երեք քառորդ դար ապրած օրինակելի և պատկառելի Հովուապետին, որ սկզբից ի վեր քրիստոնէական առաքինութեանց տիպար է եղած, որ բնական հանճարով շարունակ ամենայառաջադէմն է եղած իւրայնոց մէջ և միշտ ցաւակից իւր հօտին, որ վարդապետական և ուսուցչական պաշտօններից մի քայլ էլ առաջ առնելով, ոչ միայն վարած է Պոլսոյ պատրիարքական քնքուշ պաշտօնը, այլև ազգիս օգտին համար 1878 թուին մաշած է Հռոմի, Փարիզի, Լոնդոնի և Բեռլինի արքունեաց շեմքերը. կը մնար Հայրիկին ի մօտոյ ծանօթանալ Ռուսիոյ արքունեաց հետ, և ահա այսօր Վաղարշապատ Արծուին, սլացած մինչ Պետերբուրգ, բաղդ է ունեցել լսել մեծազօր Կայսեր գ ո հ ա ն ա կ ո ւ թ ի ւ ն ը, որ Նա տեսնում է Նորին Վեհափառութեանը Իւր մօտ, և ստանում է Նոյին Մեծութեանց շնորհակալութիւնը Իրանց այցելելու ցանկութեան համար։

Բ.

Տ. Դանիէլ հոգելոյս Հայրապետը վախճանուեց 1808 թուի հոկտեմբերին, երբ էջմիածինը և Արարատեան աշխարհը տակաւին պարսից տիրապետութեան ներքոյ էին։ Էջմիածնի հոգեւորականութիւնը և շրջակայ տեղերի հայ իշխանները նորա տեղը կաթողիկոս ընտրեցին Եփրեմ արքեպիսկոպոսին, որ այդ միջոցին Ռուսաստանի հայոց առաջնորդ էր և Աստրախան էր նստում։ Վրաստանի ռուս կուսակալը, համաձայնութիւն տալով այդ ընտրութեանը, միջնորդեց իւր տէրութեան առաջ, որից և հաւանութիւն ստացաւ։ Այն ժամանակ Էջմիածնից հրաւիրակ ուղարկուեցաւ Եփրեմին Ռէթէոս եպիսկոպոսը։ Հրաւիրակը եկաւ հասաւ Եփրեմին այն ժամանակ, երբ սա Նոր-Նախիջեւան գտնուելիս, ստացաւ կայսեր հաւանութիւնը իւր կաթողիկոսութեան մասին և ընդ նմին տեղեկացաւ, որ Թագաւորը ցանկութիւն է յայտնել, որպէս զի Եփրեմը էջմիածին գնալուց առաջ ներկայանայ իրան Պետերբուրգում։ Համաձայն այդ հրամանին, Եփրեմ արհին, առնելով հետը Ռէթէոսին, 1809 թուի յունիսի վերջերում ճանապարհ ընկաւ դէպի Պետերբուրգ, ուր հանդիսաւոր մուտք գործեց նոյն ամսւոյ օգոստոսի 1-ին և իջաւ համբաւաւոր Յովակիմ աղա Լազարեանի պատրաստած ապարանքում։ «Աստուած կեանք տացէ աղա Յովակիմին, գրում է Ռէթէոս եպիսկոպոսը էջմիածնեցոց, որ հոգաց զծախսս ամենայն 300 ռուբլի յինքենէ տալով, 200 ռ. եկեղեցւոյն, և ժողովրդականք ևս 300 ռ. որ լինի ութ հարիւր ռուբլի, և թանգութիւն անբաւ և միշտ աղա Յովակիմն փոյթէ, շուտով հոգալ զգործ մեր ի վերադարձուցանել...»։

Քառն օրուանից յետոյ, այն է 1809 թ. օգոստոսի 20-ին, վերափոխման շաբաթուայ ուրբաթ օրը, Եփրեմ կաթողիկոսը, ունենալով հետը Ռէթէոս եպիսկոպոսին, Ղուկաս և Գիւմիւշխանցի Մանուէլ վարդապետներին և քանի մի ուրիշ հոգեւորականներ, նաև Յովակիմ Լազարեանին, բաղդ ունեցաւ ներկայանալ Աղէքսանդր Ա. Կայսեր։ Տէրութեան կողմից թարգման էր նշանակուած Պետերբուրգի հայոց եկեղեցւոյ երեսփոխան և արտաքին գործոց նախարարութեան պաշտօնեայ՝ Աղէքսանդր Մ. Խուդաբաշեանը (Հայ-ռուս բառարանի և այլ և այլ աշխատասիրութեանց հեղինակը)։ Սիրալիր և ազարման ընդունելութիւնից հիացած Ռէթէոս եպիսկոպոսը իւր նամակում առ էջմիածնեցիս ահա այսպէս է նկարագրում այդ ընդունելութիւնը.

«Ընկալումն Նորին Կայսրութեան ոչ թէ եղև հարեւանցաբար, այլ սքանչմամբ լինի, քանզի զամենեցունց միացուցեալ ի յատուկ սենեակ Իւր՝ ընկալաւ, մինչ թարգմանն մեր (Խուդաբաշեան) եւս արդեւ արտաքոյ։ Մեք և Ինքն միանացեալ՝ ի սկզբանն եցոյց Իւր զանճառելի քրիստոնէութեան ջերմեռանդութիւն, և որպէս սկիզբն էառ բաղդբաղան խօսից, թէպէտ մեք չգիտէաք լեզու, այլ. Մանուէլ (Գիւմիւշխանցի) վարդապետ ռակաւիկ գիտելով՝ զմեր պատասխանն առ Նա և Նորինն առ մեզ դարձուցանէր։ Ապա ընկալաւ ի ներքս զթարգմանն մեր Աղէքսանդր Մակարիչ (Խուդաբաշեան) անուանեալն, որ է մեր ազգէ և երեսփոխան եկեղեցւոյն Հայոց Ս. Պետերբուրգայ, եւ և քաջ թարգման գրոց հայոց Ինաստրաննի Կալէգին...։ Այնուհետև և նովաւ թարգմանաւ խօսել սկսեալ Կայսրն եցոյց զմեծ գութ իւր՝ շնորհաւորեաց զհայրապետութիւն սրբազան տեառն, ասաց, թէ «Ուրախ եմք ձեր մուտք յայս քաղաք. Ես ունիմ, ասաց, սէր և գութ ի վերայ ազգին Հայոց և ցանկանամ նորին բարեկեցութիւն և թէ՝ որպէս գիտեմ ազգս բարւոք հովուեն զազգն Հայոց; յուսամ բառ այնմ եւ առաւել հովուել. ունիս և զհայրապետական իշխանութիւնդ, որ և ամենազօրամծաբար խոստանամ կատարել զամենայն խնդիր քո և թէ՝ յայտնի է Ինձ՝ որ ի սկզբանէ մինչև ցարդ ժողովուրդք ձեր և հոգեւորականք գրեց ունին յառկացուցեալ իրանց կաթողիկոս, որ և մեք հաստատեցաք»։

«Ի վերջոյ խօսիցն կրկին հրամայեաց ելանել արտաքոյ թարգմանին, որ և, ըստ յառաջնոյն ցուցանելով իւր զներքին քրիստոնէութիւն, ջերմեռանդութեամբ հանդերձ յուսադրական բանիւք խնդրելով զաղօթս և այլն։ Եւ մեք եւս ծնկաչոք մատուցաք զաղօթս և զխնդրահ երկրպագութիւն ի յերկիր խոնարհեալ։ Ապա արձակեալ սուրբ յերեսաց Նորին՝ ելաք ի պալատն մեծ, ուր մատուցին զմրգեղէնս խաղողոյ և դեղձի և սալորոյ և այլն։ Եւ հարցեալ յառաջն վասն հացի ճաշակման՝ վասն ուրբաթ աւուրն (պահի) պատասխանեցի թէ ճաշեալ է մեր։ Եւ ըստ այնմ արձակեալք եկաք ի բնակութիւն մեր, ուր ամենայն ոք եկեալ շնորհաւորեաց զսպսութիւն մեր թէ ի մեծամեծաց ռուսաց և թէ բոլոր մեր ազգիք»։

Նոյն 1809 թ. սեպտեմբերի 3-ին, ստորագրելով Եփրեմ կաթողիկոսի հաստատութեան հրովարտակը՝ Աղէքսանդր Ա. Կայսրը, որ ռուսաց պատմութեան մէջ յայտնի է իր օրինակելի բարեպաշտութեամբ և կրօնասիրութեամբ, ցանկացաւ, որ Եփրեմ արհին, նախ քան

բաւականների և արտօնութեանց, որ վայելում են հայ եկեղեցականութիւնն և համայնքները 1863-ի սահմանադրութեան և Սուլթանների տուած բարաթների հիման վրայ։

—

ՄՆԱՑԵԱԼ ՎԻԼԱՅԷԹՆԵՐ. — ՎԱՐՉԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Փոքր-Ասիայի այն վիլայէթներում, ուր հայ ազգաբնակութիւնը մի քանի սանջակներում ընդհանուր ազգաբնակութեան մի նշանաւոր մասն է կազմում, պէտք է վալիի հետ միասին գործէ մի յատուկ քրիստոնեայ պաշտօնեայ, որին և յանձնուած կը լինի հայերի շահերի պաշտպանութիւնը։ Այս պաշտօնեան կ'ընդունի հայ ազգաբնակութեան խնդրագրերը և բողոքագրերը և կը հասցնի ի գիտութիւն վալիների, որոնք իր հետ համաձայնութիւն կայացնելով կը վճռեն հարկ եղած խնդիրները։ Այս պաշտօնեան, բացի այդ, պէտք է կանոնաւորապէս որոշ ժամանակամիջոցներում հաշիւ ներկայացնէ Կոստանդնուպօլսի մշտական կօմիսիօն կօմիտէին։ Այդ վիլայէթներում, եթէ կան այնպիսի վայրեր (ինչպէս օրինակ Հաջինը՝ Ադանի վիլայէթում և Զէյթունը Հալէպի վիլայէթում), որ հայկական ազգաբնակութիւնը գերակշռող է, ներկայումս գոյութիւն ունեցող վարչական ստորաբաժանումները պէտք է փոխուին և «նահիաների» կազմութեան վերաբերեալ ռէֆօրմների ծրագրի պահանջները պէտք է գործադրուին այն տեղերում, որոնցից վերոյիշեալ եղանակով կը կազմուին վարչական միութիւնները։

Վերջ. մեմօրանդումի։ *)

*) «Արձագանքի» հետևեալ համարում կը տպագրենք երեք մեծ պետութեանց դեսպանների մշակած Հայաստանի վարչական ռէֆօրմների ծրագիրը։ Ծ. Խ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Ռուսաստանի գործակալութիւնը» հեռագրում է մեզ յունիսի 5-ից.

«Կաթողիկոսը ատենախօսելով Հայոց եկեղեցում ուսաց Կայսեր անունից Հայոց ազգի միակ Պաշտպան և Հովանաւորն»։

* *

«Times»-ը հաղորդում է, որ սէր Էդուարդ Գրէյը պատգամաւորաց ժողովում յայտնեց, որ Բ. Դրան հայկական հարցի վերաբերմամբ առաջարկութիւններ արած են Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի հիման վրայ։ Կառավարութիւնը գործել է միւս պետութեանց հետ միասին։ Հայաստանի վերաբերութեամբ առաջարկութիւններ բազմիցս արած են Բ. Դրան շատ տարիների ընթացքում. ներկայ քայլը միայն շարունակութիւնն է այն քաղաքականութեան, որին հետևած են մինչև այժմ։ Սուլթանի լիակատար պատասխանի բնագիրն ստացուած է միայն այս օրերը և մինչև նա չըկշռադատուի երեք պետութեանց կողմից, կառավարութիւնը չէ կարող ոչինչ հաղորդել այս առարկայի մասին։ Անկարելի է նոյնպէս ներկայացնել ժողովին և այն գրագրութիւնները, որոնք վերաբերում են հայկական գործերին։

* *

ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԵՒ ԲԱՐՁՐ ԴՈՒՌԸ.— ԵՐԿԻՒՂԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ.—ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

(Սեփհական թղթակցից, Կ. Պոլիս յունիսի 5-ին)։

Բարձր Դրան պետութիւններին տուած պատասխանը համարվում է անբաւարար բոլոր իւր էութեան։ Այդ պատասխանը, մերժում է ռէֆօրմների ամբողջ ծրագիրը, յայտարարում է ի լուր աշխարհի, որ սուլթանի հպատակների և ոչ մի մասը կարօտ չէ իր վիճակի որևէ փոփոխութեան և որ միակ անհրաժեշտ փոփոխումները այն բարեփոխումներն են, որոնք կարող են գործադրուել ամբողջ ազգաբնակութեան վերաբերութեամբ։ Նա հերքում է պետութիւնների իրաւունքը միջամտել կայսրութեան ներքին վարչութեան գործերին և ասում է, թէ, միևնոյն ժամանակ ոչ մի ցուցմունք չեն տալիս նորա, որ Հայաստանի դրութիւնը բացառիկ պէտք է համարուի։

Պատասխանի եղանակը և բովանդակութիւնը մեծ հիասթափութիւն պատճառեցին և դեսպանները չեն ծածկում, որ նորա խնդրի զարգացման այս փուլի մէջ մեծ վտանգներ են տեսնում։ Եթէ ռէֆօրմների ընդունուած լինէին սկզբունքով, կարելի էր մանրամասնութիւններ փոփոխելու խնդիրը քննել։ Բայց այս ընդհանուր մերժումը երեք պետութիւնների ներկայացրած առաջարկութեանց, պետութիւնների, որոնք կարող են իրենց ցանկութիւնները ուժի միջոցով հաստատել—դրութիւնը ծանր է դարձնում։ Ասում են որ նախ քան նոր քայլեր ձեռնարկելը, երեք դեսպանները սպասում են իրենց տէրութեանց հրահանգներին։

* *

ԲԵՐԼԻՆԻՑ հեռագրում են «Daily News»-ին. «Ինչ որ վերաբերում է Հայկական խնդրին, շատ նշանաւոր է, որ նոյն իսկ «Kreuz-Zeitung»-ը, որ սովորաբար շատ քիչ է համակրում Անգլիային, իւր կատարեալ համակրութիւնն է յայտնում պետութիւնների բռնած դիրքին։ Այդ լրագիրն ասում է որ պետութիւնների առաջարկած եւրոպական կօնտրօլը անհրաժեշտ կարևորութիւն ունի. նոյնպէս խիստ կարևոր է և քրիստոնեաների ու մահմեդականների միաժամանակ նշանակելը նոյն պաշտօնին...

«Բոլոր պետութիւններին վերին աստիճան ցանկալի է, ասում է «Kreuz-Zeitung»-ը, քրիստոնեաների վիճակի բարւոքումը Արևելքում. սաքա մեծամալէս համակրում են և շահակից են հայկական խնդրի յաջող լուծման»։

* *

Կ. ՊՈԼՍԻՑ «Բէյտէրի գործակալութիւնը» հեռագրում է «Daily Chronicle»-լրագրին. «Հայաստանի վերաբերութեամբ ոչինչ փոփոխութիւն չէ ունեցել, բայց խնդիրը, երեք պետութեանց հաստատ բռնած դիրքի շնորհիւ, բոլոր երևոյթներին բարւոք կերպով լուծումն վրայ է։ Արտաքին գործոց նախարար Սայիդ փաշան այսօր, յունիսի 5-ին, երկու այցելութիւն արեց Բրիտանիական դեսպանին։

Մուշից ստացած տեղեկութիւններին նայելով, Քննիչ Կոմիսիոն վերջացրել է վկաների հարցն ու փորձը և օտար պետութեանց պատուիրակները շուտով ճանապարհ են ընկնելու այնտեղից։

* *

«Daily Telegraph»-ի մէջ կարդում ենք, որ պետութիւնների պատասխանը Դրան հաղորդագրութեան հայկական խնդրի մասին ձգձգվում է երբեմն այն պատճառով, որ նա հաղորդվում է ոչ թէ հեռագրով, այլ առանձին սուրհանդակի միջոցով։

* *

Կարսի երկաթուղու մասին, որի կառուցումը բարձրագոյն հրամանով այս տարի պէտք է սկսուի, հարկ ենք համարում հաղորդել հետևեալ տեղեկութիւնները։ Այս ճանապարհի երկարութիւնը լինելու է 283 վերստ. սկսուելով Անդրկովկասեան երկաթուղու Թիֆլիզ կայարանից, անցնելու է Սաղանլուի, Մարնէուլ, Էմիր, Աշաղա-Սերալ, Բօրչալու գետակի հովտով Սադախլու, Թաթէր, Ղարաքիլիսա և Համամլու. ապա Ջաջուռի բարձրաւանդակով Օրթա-Քիլիսա և Ալէքսանդրապօլ, այնուհետև Ղարախալ-չայ գետակի հովտով Կիզիլ-չախչաղ, Սպասովկա և Փալըզրվան մինչև Կարս։ Կալաքեան կայարանից մինչև Ջալալ-օղլի, որ տեղական զօրքերի գլխաւոր կենդրոնավայրն է, մի ճիւղ է շինուելու 26 վերստ երկարութեամբ։ Աչքի առաջ ունենալով այն բնական դժուարութիւնները, որոնց պէտք է յաղթել, այլ և արհեստական զանազան կառուցմանց անհրաժեշտութիւնը (ի միջի այլոց Ջաջուռի բարձրաւանդակում մի տեղ 900 սաժէն երկարութեամբ), այս երկաթուղու շինութիւնը շատ թանգ է նստելու — ըստ նախահաշուի $22\frac{1}{2}$ միլիօն րուբլի, առել է որ իւրաքանչիւր վերստի արժողութիւնը լինելու է 79,500 րուբլի։ Ի հաշիւ այս գումարի ներկայ տարուայ համար յատկացրած է 6 միլիօն րուբլի։ Երկաթուղու կառուցումը պէտք է վերջանայ $3-3\frac{1}{2}$ տարուայ ընթացքում։

* *

Թիֆլիզում ստացուած տեղեկութիւնների համեմատ հաղորդակցութեանց նախարար իշխ. Խիլկովը ժամանելու է Թիֆլիզ յունիսի 12-ին։

* *

Հրդեհի դէմ փոխադարձ ապահովութեան ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը իր յունիսի 4-ի նիստին քուէութեամբ 63 ձայնի 13-ի դէմ ընկերութեան ճարտարապետ ընտրեց գլխաւորական ինժեներ փոխ-գնդապետ Վ. Բօլգարսկուն։

* *

ՀԱՋԻՔԵՆԴՈՒՄ յունիսի 1-ից հաստատուած է փոխ-հեռագրական բաժանմունք։

* *

Թիֆլիզի օրիորդաց առաջին գիմնազիայի երկամեայ մանկավարժական դասարանը այս տարի իրենց ուսման ընթացքը աւարտեցին 49 օրիորդ, որոնք ըստ ազգութեանց բաժանվում են հետևեալ կերպով՝ ռուս 28, հայուհի—11, վրացուհի—5, լեհուհի—3 և գերմանուհի—2։ Առաջ ենք բերում ուսուցչուհիների վկայականի արժանացած հայուհիների ազգանունները՝ Հեղինէ Աբելեան, Մարթա Աղունեկեան, Սօֆիա Ցախրեան, Օլգա Արղութեանց - Երկայնաբազուկ, Նունէ Արէշեան, Եղիսաբէթ Բայբուրցեան, Սօֆիա Գուրգէնբէգեան, Սօֆիա Էնիկոլոփեան, Օլգա Տէր-Աստուրեան, Ովսաննա Տէր-Դուխեան և Օլգա Իւզբաշեան։

* *

Կիւրակի կատարուեցաւ Անդրկովկասեան օրիորդական ինստիտուտի տարեկան հանդէսը։ Տեսչի կարդացած հաշուից երևաց որ դըպրոցում աշակերտուհիների թիւը եղել է 233, որոնցից ռուս—144, հայուհի—42, վրացուհի—18, սուհի—1, թըրքուհի—1, պարսկուհի—1 և թեքեղի մահմ.—1։ Իրենց ուսման ընթացքը այս տարի աւարտեցին 22 օրիորդ, որոնցից արծաթեայ մեդալի արժանացած է օր. Դայեանէ Տէր-Աստուածատուրեանը։

* *

Ս. Էջմիածնի առայսօր անդամներից Արարատեանի առաջնորդ Բարձր Սուրբ Սրբազան Պարգևանդը մայիսի վերջին Մայր Աթոռ ժամանեց և մի քանի օր հիւր մնալուց յետոյ, ուղևորուեց դէպի հարաւային Ռուսիոյ հանքային բուժավայրերը իւր ոսկրացաւը դարմանելու, որի համար Վեհափառ Հայրապետից քառամսեայ արձակուրդ է ստացել։

Նորին Բարձր Սրբազնութեան հետ Մայր Աթոռ վերադարձաւ արժան. Խաչիկ վարդապետը, որին Վեհափառ Հայրապետը մի քանի ամիս առաջ Աստրախանի էր ուղարկել որոշեալ յանձնարարութեամբ։

Արժանապատիւ Խաչիկ վարդապետը թանկագին հնագիտական մի հարուստ ժողովածու է բերել Պարսկաստանից Նորին Վեհափառութեան հիմնարկած թանգարանի համար։ «Արարատի» առաջիկայ համարում կ'աշխատենք այդ հնագիտական հաւաքածուի ցանկն ու նկարագիրը տալ։

«Արարատ»։

* *

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Պ. Խմբագիր.

Երեք տարուան փորձերէ յետոյ ստիպուած եմ հրատարակաւ յայտնել որ 1892 թուին տեղւոյս «Հայ հրատարակչական ընկերութեան» տպելու համար մօտ 30-ին չափ ժողովրդական վէպեր, զրոյցներ և այլն յղեցի։

Անցան ամիսներ, տարիներ, բազմաթիւ թախանձալից նամակներ գրեցի՝ կամ տպեն, կամ ինձ վերադարձնեն և կամ մի պատասխան տան, ոչինչ չպատասխանեցին։ Ձեռնարկեցի դարձեալ գրել քարտուղարներին ի զուր չարժելու չափ, ոչինչ չստացայ։ Միջոց անցաւ, Թղթատարովքս յղեցի, քանի ամիսներ յետոյ երբ ես Դավրէժ կը գտնուէի, վերադարձուցին կարգ մի գրուածներս բացի երկու մեծ գրուածներէս, որոց անունն ես տեսայ այդ ընկերութեան 93 և 94 թուի տեղեկագրոց մէջ։ Դարձեալ պահանջեցի, նամակներ շարունակեցի, Թղթատարովս յղեցի եայլն, եայլն. վերջապէս պ. Հ. Առաքելեանի միջոցաւ ինձ հասաւ մինը։ Արդէն քանի օր առաջ Գալստեան անուն ստորագրող բաց նամակ մի ստացայ՝ «Վարչութիւնս շուտով կուղարկէ Ձեր ձեռագիրները մինչև մի քանի օր հանդերձ բացատրութեամբ», կը գրէր։

Այժմ Ընկերութեան մօտ կայ իմ կարևոր ձեռագիրներէս ամենից ընդարձակը՝ «Բագրեւանդայ հայոց գուսանը և երկրագործին կեանքը», որ բուն իսկ Բագրեւանդայ հայ ժողովրդեան բարբառով գրուած հանդերձ գուսանի վրայ առաւած բազմաթիւ երգերով։

Արդ՝ այդ Ընկերութեան վարչութենէ հրատարակաւ կը պահանջեմ որ գրուածըս յղէ։ Խնդրեմ որ շուտով վերջ տայ, հանդիստ խղճով թողէ ուսուցիչ մի, որ այդ գրուածքի վրայ աչքի լոյս սպառած՝ սիրտ և հոգի մաշած է։ Եթէ չենք վարձատրուիր, ինչու հարստահարուենք. միթէ վայել է ընկերութեան մի, որ լուսաւորութիւն տարածելու պաշտօնն յանձն առած է, ինքն գրողութիւն անէ։ *)

Ս. Հայկունի։

Ցունիսի 1-ին Վաղարշապատ։

II

Պ. Խմբագիր.

Խնդրում ենք Ձեր պատուական թերթում մի անկիւն շնորհել այս երկտողին։

Անկարող լինելով անձամբ արտայայտել մեր շնորհակալութիւնները այն յարգելի բարեկամներին և ծանօթներին, որոնք հանգուցեալ Յովհաննէս Չիթախեանցի յուղարկաւորութեան և մահուան տարեդարձին իրենց ներկայութեամբ պատուեցին,—այսու հրապարակաւ յայտնում ենք մեր ի սրտէ և խորին շնորհակալութիւնները։

Այրի Ս. Ս. Չիթախեան
Դուստր իշխ. Մ. Ց. Բէգթաբէգեան
Դուստր օր. Ա. Յ. Չիթախեան։

* *

«ՄՈՒՐՃԻ» ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

—

Սիրով ողջունում ենք Թիֆլիզում հրատարակուող «Մուրճ» ամսագրի նոր ուղղութիւնը. այս օրերս լոյս տեսած մայիսի համարը բաղկացած է գլխաւորապէս թարգմանական յօդուածներից։ Այսպէս օրինակ տպագրուած է Լերմոնտովի «Մցիրի» պօէմի սկիզբը, ամբողջապէս թարգմանուած են Զլատովրատսկու «Գիւղի վարժուհին», Զուդերմանի «Բարեկամի խոստովանքը» և Նեմերովիչ-Դանչենկոյի «Զաղօխաւերայի երգիչները»։ Ով առիթ է ունեցել երբեմնապէս թերթելու այդ սակաւաբաժանորդ ամսագիրը, որ խմբագիրը հրատարակում է կարծես իր և պ. Գրիգոր Վարդանեանի Privatvergnügen (առանձնական վայելչութեան) համար, նա անշուշտ գոհ կը լինի՝ փոխանակ զանազան անհասուն անյայտ վիպասանների անհամ, անշնորհ, տենդենցիայից զուրկ և մանաւանդ տենդենց պարունակող արտադրութեանց՝ տեսնել վերջին համարում յայտնի եւրոպական և ռուս հեղինակների թէկուզ քիչ յաջողուած թարգմանութիւնները։

Նոյն իսկ «Ժամանակակից տեսութիւն» կոչուած բաժինը, ուր սովորաբար պ. Արասխանեանցը շատ անժամանակակից, հոգեբանի համար միայն հետաքրքրական խորհրդածութիւններ էր անում ամէն տեսակ խնդիրների մասին, այս անգամ բովանդակում է մի վերին աստիճանի ճիշդ, գեղեցիկ, սահուն, միմիայն պ. Փիլիպպոս Վարդանեանին յա-

*) Պարոն Հայկունու ժողովածուները շատ թանկագին նիւթեր են պարունակում հայկական ժողովրդական գրականութիւնից և ափսոս կը լինի, եթէ կորստի կամ յափշտակութեան մատնուի։ Պ. Հայկունու ձեռքին գտնուած միւս ժողովածուների մէջ կան բազմաթիւ գրականական գանձեր, որոնց մասին «Արձագանքի» խմբագրի պաշտօն վարող պ. Նիկողայոս Քարամեանը, մեր խնդրանօք, խոստացել է մի շարք յօդուածներ գրել «Արձագանքում»։

Ծ. Խ.

հրաժեշտ տալը պատարագ մատուցանէ Պետերբուրգի Հայոց եկեղեցում։ Սեպտեմբերին, Խաչվերացի կիւրակէին, Եփրեմը կաթողիկոսական շքով պատարագ մատոյց 'ի ներկայութեան Կայսեր, նախարարաց, ռուսաց մետրապօլիտի և մայրաքաղաքի բոլոր մեծամեծաց ու մեր ազգայնոց։ Պատարագից յետոյ Կայսրը և Կաթողիկոսն ու բոլոր ներկայ եղող աւագանիք հրաւիրուեցան Յովակիմ Նազարեանի տուն, ուր «ունէր մեծ պատրաստութիւն ուտելեաց և ըմպելեաց»։ Այստեղ Կայսրը և մեծամեծք, որպէս նաև մետրապօլիտը և քանի մի ռուս եպիսկոպոսներ կ'լինին շնորհաւորեցին Եփրեմի հայրապետութիւնը։ Այդ հանդէսները մանրամասն նկարագրում է Ռէթէոս եպիսկոպոսը Էջմիածնեցոց ուղղած նամակներում։

Պէտք է ասել, որ Եփրեմը դեռ 1802 թուին, Դանիէլ կաթողիկոսի օրով Ռուսաստանի Հայոց առաջնորդ նշանակուած ժամանակ, ստացաւ Կայսրից պնակէ և վզարի խաչ ու այնպէս ներկայ եղաւ Աղէքսանդր Ա. թագադրութեան։ Այս անգամ հաստատութեան հրովարտակի հետ Կայսրը շնորհեց Եփրեմին Ս. Աննայի առաջին աստիճանը աստղով և ժապաւէնով, և որպէս Ռէթէոսը գրում է՝ «պնակէ մեծագին, գլուխ ճօթի գեղեցկագոյն, քանի գազ ընտիր չուխայ, 5000 ռուբլի դրամ ի պէտս ճանապարհի, 1000 ռուբլի սպասաւորաց և 500 ռուբլի Ղուկաս վարդապետին»։ Ինքը, Ռէթէոս եպիսկոպոսն էլ արժանացաւ ստանալու Ս. Աննայի երկրորդ աստիճանը, որպէս և Մանուէլ վարդապետը պնակէ, և այլն։

Այդ արտաքին շուքի և սիրալիր ընդունելութեան հետևանքը մի զգալի օգուտ պիտի բերէր, ի հարկէ նաև ազգին։ Սակայն այս կէտը կախումն ունէր Հայրապետի աշալրջութիւնից, խոհեմութիւնից և քաղաքագիտութիւնից։ Օգտուել հանգամանքից յօգուտ ընդհանրութեան՝ պէտք է, բայց խնդրել անկարելին և ստանալ բացասական պատասխան —ստորացնում է նոյն իսկ խնդրողին։ Այս անգամ այդպէս եղաւ։

Կայսերական ողորմածութիւններից քաջալերուած; Եփրեմը Պետերբուրգից դուրս գալուց առաջ նախարարաց հետ բանակցութեան մէջ մտաւ, մատուցանելով մի խնդրագիր իննը կէտից բաղկացած, որ կարևոր ենք համարում յառաջ բերել ստորև, որպէսզի ամենքը գիտենան, թէ դարուս մէջ մեր կաթողիկոսները, բաղդ ունենալով Ռուսիոյ Կայսերաց ներկայանալու, ամէն անգամ ազգին ինչ և ինչ կարիքների մասին են խնդրած և կամ ինչ բաւականութիւն ստացած։

Սակայն կանխապէս հարկ է այստեղ ասել, որ ստորև բերած Եփրեմի մատուցած խնդրագիրը իսկապէս ինքը Եփրեմը չէր կազմած, այլ այդ պատրաստ բերել էր հետը Էջմիածնից Ռէթէոս եպիսկոպոսը և այն՝ համաձայն Աշտարակցի Ներսէս եպիսկոպոսի (ապա կաթողիկոս), որ արդէն բանացել էր Աթոռի վրայ և նոյն իսկ նորընտիր կաթողիկոսի վրայ։ Կարդալով ներքոյ բերեալ խնդրագիրը՝ մի կողմից զարմանք է բերում այն ժամանակուայ Էջմիածնական միաբանութեան միամտութիւնը և անհեռատեսութիւնը, միւս կողմից՝ նոցա պատրաստակամութիւնը՝ մահմեդական լուծից միայն ազատուելու մտքով, գրկախառն ընկնել հեռաւոր Հիւսիսին առանց խոր և քոյն դատողութեան։

Բարեբաղդաբար, այս անգամ, որպէս և քանիցս յետագայում, Ռուսիոյ արքունիքը աւելի սառնասրտութեամբ և լուրջ շրջահայեցողութեամբ վերաբերուեց դէպի Եփրեմի խնդիրները, թէև չպակասեցրեց դարմանով դէպի առ նա ունեցած յարգանքները։

Դալով կաթողիկոսի մատուցած խնդրագրին, Ռէթէոս եպիսկոպոսը գրում է՝ «Ջայսոսիկ խնդրեցաք յամենաողորմած Կայսերէ յաղագս կառավարութեան սրբոյ Էջմիածնի՝ հաստատել դրամատոյ (հրովարտակով) իւրով։

«Նախ՝ շնորհել ողորմութեան դրամոյն ըստ կերպի առաջնոց ամենաողորմած կայսերացն տուեցելոց, այժմ ևս յանուան սրբոյն Եփրեմ արքեպիսկոպոսին նորոգ ընծայել 'ի կաթողիկոսութիւն։

«Երկրորդ՝ տալ 'ի նմին հաստատութիւն Բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Էջմիածնի գալ 'ի ներքոյ վերատեսչութեան օրինաւոր պատրիարգի Արարատեան Աթոռոյն և յանձնեսցէ 'ի ներքոյ կառավարութեան և կարգադրութեան սուրբ ժողովոյն Բարձրագոյն խորհրդարանին գլխաւորութեամբ և դհոգևորական կառավարութիւնս ամենայն հոգևորականաց Հայոցն։

«Երրորդ՝ շնորհել կնիք նոյն Բարձրագոյն խորհրդարանին ըստ կերպի և նշանի պատրիարգի Հայոց, որով Բարձրագոյն խորհրդարանն և կաթողիկոսն ունիցի կարողութիւն զհոգևորական գըրուածս և զօրհնութեան կոնդակս իւր, որ մինչ տարածանի առ ազգս Հայոց, առանց լուծման կնքոյ քանթօրքն ընկալեալ նոմրէիւքն առաքեսցին գաղօնի կարգաւ, ուր երթալոցն է։

«Չորրորդ՝ ամենայն հոգևորականք Հայոց, որք բաշբօրդով Բարձրագոյն խորհրդարանին և կաթողիկոսին իցեն, ընդունելաք լիցին 'ի տէրութեան Ռուսաց, և առանց բաշբօրդի լինելն մի լիցին ընդունելաք, այլ դարձուսցին 'ի սահմանացն, և առաջնորդք կողմանց ևս առանց բաշբօրդի մի լիցին թողեալ մտանել և կալ առնել այլ վիճակս, զի մի ազգութիւն մացի, նաև առանց վճռոյ և հաստատութեան Բարձրագոյն խորհրդարանին և կաթողիկոսին մի կարասցեն ստանալ վիճակ և տիրել և կամ խնդիրս մատուցանել կամ ինքեանք և կամ կաշառօք, այլ նախ յայտնեսցեն պատրիարգին և պատրիարքն վերահասու լեալ եթէ արժանաւոր իցէ մատուցանելոյ զխնդիրն այն առ Կայսրն, և Կայսեր բարեհաճութեամբ կատարեսցի, և թէ ոչ՝ յետս դարձցի խնդիրն այն առ 'ի քննութեան մատնելոյ։

«Հինգերորդ՝ ամենայն հոգևորականաց պսակաւորելն 'ի Կայսերէ ըստ արժանի դատման Բարձրագոյն խորհրդարանին և Կաթողիկոսին եղիցի, որոց դատողութեամբ յայտնեալ Նորին Կայսրութեան ըստ արժանեաց ընկալցին զպարգևս և մի ընդունայն ձանձրացուսցին զլսելիս Կայսերն Մեծի։

«Վեցերորդ՝ զի Բարձրագոյն խորհրդարանի և կաթողիկոսի վերահասութեամբ և վկայական բանիւ հաստատեալ վկայականք, որ վասն ազգաբնութեան ազնուաց ազգին Հայոց, նոքին միայն ընդունելաք լիցին։

«Եօթներորդ՝ որպէս 'ի նախնեաց մինչև ցայժմ Արարատեան սուրբ Աթոռն Էջմիածին ունեցեալ է՝ որքան կալուածք, ժողովուրդս և գիւղս, անդաստանս, արտօրայս, այգիս, ջրաղացս, ջուրս, մօրենիս, և այլ այսպիսի արդիւնաբերս, մշտապէս անայլայլելի եղիցի, և ունեցեալ ղհատալմայք և ղալալայք և հրամանագիրք, որք կայսերաց և խանակալաց և պարսից շահից, խանից և սարդարաց և նոցին դատաստանաց, ամենեքին ընդունելի լիցին և առ ծխի նախնեաց մերոց շահեսցին 'ի նոցանց զարգելիս, զոր հարկէ նոցա տալ 'ի բընութեան։

«Ութերորդ՝ ամենայն Տանն Աղուանից և Գանձասարու եղեալ հոգևորականք Հայոց լիցին կախեալք ի Բարձրագոյն խորհրդարանէ սրբոյ Էջմիածնի և Արարատեան պատրիարգին, և որպէս տնօրինութիւն արասցէ նոցա խորհրդարանն և պատրիարգն Արարատու ըստ այնմ գրութեան և կառավարութեան ունիցին դրութիւն իւրեանց թէ վասն կարգադրութեան եկեղեցւոյ և թէ վասն առաջնորդական կառավարութեան և վիճակաց։

«Իններորդ՝ զի որպէս բնական կանոն է մերս Հայոց, որ տէրունի առաջնորդաց և ամենայն հոգևորականաց, պատկանեցելոց սրբոյ Էջմիածնի Աթոռոյ, ամենայն գոյք զկնի մահուան իւրեանց կայք են սրբոյ Էջմիածնի և ոչ ընտանեաց իւրեանց, բաց 'ի յայնմանէ, որ մասն ինչ կտակաւ աւանդէ»։

Եփրեմի այս խնդրագիրը, ամիսներով զբաղեցրեց Ռուսաց Նախարարներին և ի վերջոյ շատ յաջողութիւն չգտաւ։ Տէրութիւնն ընդունեց այն բոլոր կէտերը, որոց իրագործումն իրանից կախումըն ունէր, որպիսիքն էին՝ դրամատալու (հրովարտակով) հաստատելը կաթողիկոսին, հայ հոգևորականութեան պաշտօնական գրութեանց ձրի ընդունելը ռուսական փոստայում, առանց կաթողիկոսական բաշբօրտի ոչ մի հոգևորական չընդունելը տէրութեան սահմաններում և այլն, բայց բոլորովին մերժեց այն կէտերը, որոց իրագործելուն անձեռնհաս էր Ռուսիոյ տէրութիւնը, իւր սահմաններից, ուրեմն և իւր իրաւասութիւնից դուրս գտնուած երկիրների վերաբերութեամբ, 'ի թիւս որոց էր և այն ժամանակուայ Էջմիածնական Աթոռը, Կաթողիկոսին այդ մասին պարզ 'ի պարզոյ պատասխանեցին, որ «Հայոց հոգևոր Բարձրագոյն վարչութեան գործերում Ռուսիան իրաւունք չունի խառնուելու, քանի որ Արարատեան Աթոռը իւր սահմանից դուրս է, և թէ այդ նորահաստատ կաթողիկոսի գործն է»։

Այսպէս ահա՝ նախարարաց հետ ամիսներով զբաղուած, Եփրեմ կաթողիկոսը մնաց Պետերբուրգում մինչև նոյն 1809 թուի ձմեռը։ Դեկտեմբերի 15-ին նա արժանացաւ երկրորդ անգամ ներկայանալու Կայսեր և վերջնական հրաժեշտը տալով Նորին Մեծութեան, նոյն ամսի 20-ին ճանապարհ ընկաւ դէպի Մոսկուայ, ուր ծննդեան և Մկրտութեան տօները անցկացնելուց յետոյ, շարունակեց իւր ճանապարհը, մինչ 1810 թուի յուլիսին հասաւ Թիֆլիզ, իսկ նոյն թուի հոկտեմբերին ժամանեց Էջմիածին, ուր և օծումն ստացաւ նոյեմբերի 6-ին։

Աղէքսանդր Երիցեանց։

(Վերջը հետևեալ համարում)։

տուկ թարգմանութիւն «Daily News» ապրիլի 15-ի և մայիսի 8-ի համարներից՝ «Հայաստանի համար առաջարկուելիք ռէֆօրմները», Չարլզ Ձուէնի նամակը, «Սան-Ջէյմս-Հօլի մեծ միտինգի» նկարագրութիւնը, այս բոլորը վերին աստիճանի հետաքրքրական նիւթեր են այն ընթերցողների համար, որոնք «Արձագանք» չստանալով, տակաւին մի քանի շաբաթ առաջ չեն կարդացել նոյնութեամբ այդ յօդուածները։

Մի համեստ հարց այժմ հայկական ծանրակշիռ (սուրճ) հանդիսի խմբագիր հրատարակիչ Աւետիս Արասխանեանցին՝

Մի՞թէ դուք, Herr Redaeteur, արդարացի էք դտնում «Արձագանքից» 20 երես արտատպել «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական և այլն ամսագրում և ոչ մի խօսքով չյիշել, որ այդ թարգմանութիւնը զիջել էք ամբողջապէս «Արձագանք» լրագրից վերցնելու։ Չէ՞ որ այդ վարմունքը վայել չէ քաղաքական տնտեսութեան գօրտօր-խմբագրին, որ աւելի ճիշդ գաղափարներ պէտք է ունենայ սեփականութեան մասին ընդհանրապէս և գրական սեփականութեան մասին մասնաւորապէս։

Ուրիշների նոյնանման վարմունքը «Արձագանքի» մէջ տպուած թարգմանութիւնների նկատմամբ կարող է մեղմացնել ձեր յանցանքը, բայց բնաւ արդարացնել չէ կարող։

Ահա և մի խորհուրդ։

Ձեր առաջիկայ պատասխանի մէջ այս նկատողութեան (չէ՞ որ դուք իբրև պատասխանատու խմբագիր միշտ և ամեն տեղ պատասխանում էք) փոխանակ պատէպատ ընկնելու (տես բանակռիւ պ. Արասխանեանցի պ. Վարդազարեանցի հետ), յայտնեցէք հետևեալը.

«Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական և մանաւանդ «և այլն» հանդէսի վերջին համարում մենք մոռացել էինք յիշել, որ «Ժամանակակից անսութեան» բաժինը կազմող յօդուածները մենք ամբողջապէս վերցրել ենք «Արձագանք» խաւարամիտ լրագրից։

Դուք այնքան ցրուեալ (distrait) էք, որ ամենքը կը հաւատան ձեր այդ հաստատութեան։

Ա Զ Դ

Խմբագրութիւնս խնդրում է «Արձագանքի» բաժանորդներին, որ հասցէն փոխելու դէպքում անպատճառ յայտնեն իրանց առաջուան հասցէն և միևնոյն ժամանակ ուղարկեն նոր հասցէի տպագրութեան համար 50 կոպէկի փոստային մարկա. հակառակ դէպքում բոլոր գրուած նամակները կմնան առանց ուշադրութեան։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՆ, մայիսի 14.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Թիւրքը միշտ թիւրք է. Եւրոպայի քրիստոնեայ պետութիւնների հայոց նկատմամբ տածած համակրանքը, կարծես ևս աւելի կատաղեցուցած են թիւրք պաշտօնեաներ՝ մշուառ հայերի և անոնց պաշտպան քրիստոնեայ հզօր պետութիւնների, մանաւանդ Անգլիայի դէմ։ Ահա փաստեր։

Անցեալ օր Վանի ոստիկանապետ (գօմիսէր) Յայնկոյսների թաղ գտնուած մի սրճարան կերթայ, ուր պատէն կախուած կը տեսնայ Եւրոպայի վեհապետաց մի պատկեր, որոց մէջտեղ նստած էր Անգլիոյ վեհ. թագուհին։ Գօմիսէր սաստիկ կը գայրանայ, երբ կը տեսնէ որ իրենց վեհապետն ևս միւս վեհապետների նման ոտքի կանգնած է, իսկ թագուհին փառաւորապէս բազմած է, և մանաւանդ որ առաջուց էլ լսած էր, թէ հայկական պատին ամենէն ջերմ պաշտպան հանդիսացած է նա։ Հոն գտնուած հայերին կը հրամայէ, պատկերը վար առնել և ոտնակոխ ընել, բայց հայերէն ոչ ոք կը համարձակէ մի այդպիսի անպատուութիւն գործելու։ Գօմիսէր փրփրած, իր հետ գտնուող զապթիյներից կը հրամայէ վար առնել զայն, բայց նրանք ևս չեն համարձակիր, այն ատեն կատղած ոստիկանապետ, հետևաբար կը յարձակէ Եւրոպայի վեհապետաց պատկերի վրայ և վար առնելով ոտնակոխ կ'անէ և այնպիսի սոսկալի հայհոյանքներ կը տեղայ Անգլիոյ վեհ. թագուհւոյ գլխին, որ համեստութեան դէմ կը համարեմ գրելու։ Այն մարդ, որ ապրած է Թիւրքերից մէջ, լսած է կատղած թիւրքի հայհոյանքներ թափուած խեղճ հայի գլխին, կրնայ երևակայել թէ ինչ լսած կը լինի։ Երևակայեցէք, երբ Եւրոպայի վեհապետաց պատկերի հետ այդպէս կը վարուին, ինչեր չեն կրնար ընել խեղճ ու անօգնական հային։ Բահրի փաշան, կուզէ խնդիր ծածկել և ուրանալ, ամեն տեսակ սպառնալիքներ թափած է այնտեղ գտնուող հայերի գլխին, եթէ երբէք համարձակին խնդիր երևան հանել, բայց Անգլիոյ հիւպատոսն ըստ ասութեան վկաներով այդ դէպքը հաստատելէն վերջ, Կ. Պօլսոյ դեսպանատան հեռագրած է։

Վանի կառավարութիւնն իր ուշադրութիւն՝ կենդրոնացուցած է դպրոցական գործի վրայ, ամեն տեսակ խիստ միջոցներ ի գործ կը դնէ կրթական ասպարէզից հեռացնելու քանի մը բանիբուն ուսուցիչներ և արդէն յայտնի շատ դասատուներ «պարտաճանաչ ուսուցիչ» լինելու յանցանքով աքսորուած, բանտուած և հայրենիքից հալածուած են։ Թուականէս քանի մ'ամիս առաջ կրթական տեսուչ (մէարիֆ միւտիրի), բոլոր դպրոցների ուսուցիչներ զատ-զատ պաշտօնատունին կանչելով՝ երկար հարցաքննելէն և հրահանգներ տալէն վերջ, ամէն մէկէն պահանջեց, որ ցոյց տայ իր «Համիդիէ Գօչանին», հաստատելու համար իր Օսմանեան հպատակ և վանեցի լինելը, յետոյ պահանջեց և առաւ ուսուցչական վկայականներ։ Բոլորի թէ վկայականներ և թէ համիդիէներ պահեց, յայտարարելով թէ «որ ուսուցչին որ ետ չտրուի, պէտք է պաշտօնէ դադրած լինի»։ Բայց ցարդ ոչ ետ տրուեցան և ոչ էլ մի պաշտօնական հրահանգ զրկուեցաւ դպրոցական վարչութեանց՝ միայն մէարիֆ միւտիրին թուականէս քանի մ'օր առաջ դպրոցներ շրջելով ամեն տեղ յայտարարեց թէ «պէտք է, որ չամուսնացող ուսուցիչներ պաշտօնէ դադրին»։ Ակներև է, որ անոր նպատակը երիտասարդ ուսուցիչներին ասպարէզէ հեռացնելն է, բայց որովհետև «մէարիֆի» բերանացի պատուէրութիւն չէր կարելի պաշտօնական համարել, ատոր համար և ոչ մի ուսուցիչ պաշտօնէ չդադրեցաւ։ Առ այժմ սպառողական դիրք բռնած է կառավարութիւնը։

Գիրքերէն մեծ մասը, որ Կ. Պօլիս տպագրուած և արտօնուած են դպրոցների մէջ գործածուել, այստեղ կարգիլուելին և կը գրաւելին կառավարութենէն։

Վարդ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ. — Զմիւռնիայից «Koel. Zeit.» լրագրին հաղորդում են, որ եւրոպացիների վիճակը շատ տագնապալից է։ Քաղաքում գրեթէ կանոնաւոր զօրք չկայ։ Տեղական բնակիչները չեն ծածկում իրանց ուրախութիւնը բեդուինների յարձակման առիթով եւրոպական հիւպատոսների վրայ։ Կրօնական մոլեռանդութիւնը շատ զօրացել է։ Վտանգն աճում է, եթէ միայն մեծ պետութիւնները իր ժամանակ ձեռք չեն առնելն այնպիսի միջոցներ, որոնք կարող լինէին պաշտպանել եւրոպացիներին։ Հիմք կայ կարծելու, որ շուտով տեղի կ'ունենայ բեդուինների ծանրակշիռ ապստամբութիւն։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունիսի 4-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Յունիսի 3-ին, երեկոյեան 9 ժամին Ցարսկոյէ-սէլոյում թոքերի այտուցից վախճանուեցաւ նախարարների մասնաժողովի նախագահ իսկական գաղտնի խորհրդական Նիկոլայ Խրիստիանովիչ Բունգէը։

Ճանապարհորդների հաղորդակցութեան նախարարին յանձնած է ձեռնամուխ լինել, գանձարանի անմիջական կարգադրութեամբ, Անդրկասպեան երկաթուղու շարունակութեան կառուցման Սամարղանդից դէպի Ջիզաք, Բէգովատ, Խօջէնտ, Կոկանդ և Մարգելան մինչև Անդիջան, ճիւղ ունենալով մինչև Տաշկէնդ։

ՓԱՐԻԶ.—19-ին յունիսի Ստրասբուրգի արձանի առաջ տեղի ունենալիք ցոյցերն աչքի առաջ ունենալով, Ներքին գործոց նախարարը, համաձայնութիւն կայացնելով ոստիկանապետի հետ, կարգադրեց թոյլ տալ՝ թափօր կատարելու դրօշակներով և պսակներով միայն այն պայմանով, որ նրքա չկրեն իրանց վրայ Գերմանիայի համար վիրաւորեցուցիչ արձանագրութիւններ։

ՎԻԵՆՆԱ,—3-ին (15-ին) յունիսի. Կ. Պօլսից «Polit. Correp.» լրագրին հաղորդում են, որ իբրև թէ ռուս կառավարութիւնը դիտաւորութիւն ունի պատերազմական նաւ ուղարկել Ջիդդա։

ԼՕՆԴՕՆ. — Հոնգ-Կոնգից հաղորդում են, որ Ֆորմօզայից խռովայոյզ լուրեր են ստացուած։ Այն միջոցին, երբ ճապոնական նաւատորմիղը հեռացուում էր կղզու հարաւային ծովեզրները, թնդանօթաձիգերը Ալոնգի ամրոցներից կրակ արձակեցին նաւերի վրայ, որ ոչ մի վնաս չպատճառեց։ «Սև դրօշակները» սպառնացող դիրք են բռնած։ Օտարականները վտանգի մէջ են։

Յունիսի 5-ից.

ԼՕՆԴՕՆ.—Մակ-Գրեգօր ազատամտի փոխարէն, որ հրաժարուել էր պատգամաւորի պաշտօնից, իբրև բողոք տէրութեան դէմ որ Ջօտլանդիայի շահերի մասին հոգալուց խուսափում է,—ընտրուած է Ինինխուտ Բէյլին, որ ստացաւ 650 ձայն աւելի քան ազատամիտ թեկնածու Մակ-Կրէյը։

ՁԱՆԱԶԱՆ

Ոսկեայ առիւծներ. — Անյիշատակելի ժամանակներից Պեկինում կայսերական պալատի առաջ կանգնած են երկու հսկայական ոսկեայ առիւծներ, որոնք ահագին արժողութիւն ունին։ Երբ 1860 թ. անգլօ-ֆրանսիական զօրքը մերձեցաւ Պեկինին, տէրութիւնը կարգադրեց այս առիւծներին գորշ գոյնով ներկել, այնպէս որ եւրոպացիք բրօնզից շինած համարելով այս առիւծներին, առանց ուշադրութեան թողին։ Իսկ վերջին պատերազմին հէնց որ ճապոնական արշաւանքի վտանգ սկսեց սպառնալ մայրաքաղաքին, չինական կառավարութիւնն շտապեց այդ առիւծներին ապահով տեղ թաղցնել։ Այժմ երբ խաղաղութիւնը ապահովուած է, առիւծները նորից փայլում են իրենց նախկին տեղում կայսերական պալատի առաջ։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9-10 ժ. աչքի, ներքին և ներարգային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան
ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ
Սօլօլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

Իւր բացակայութեան պատճառով սաստ հիւանդերին կ'ընդունէ դօկտոր Սամուէլ Շաշ-Պարոնեանցը նշանակեալ ժամերին։

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԷԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական միջօցներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵՐԱՐԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ
ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը — կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան — տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասսաժ անող կին և մասաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամից 7-ը մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև։

Բաթումից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սևաստոպօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ
Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ.
Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 9—11 ժ. և երեկոյեան 5—7-ը։ Գօլովինսկի Պրոսպեկտ, տուն Աելովի։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ"
— ՎԷՊ —
ԹԻՖԼԻԶԻ ԿԵԱՆՔԻՑ
Հեղինակութիւն ԼՈՐՄԱՅԻ։
Դիմել՝ Тифлисъ, типографія Главноначальствующаго, Сергѣю Назарьянцу. Թիֆլիզում վաճառվում է նաև Կենդրոնական և Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։ (3—2)

ԹԻՖԼԻԶԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
սոյն 1895 թուի յունիսի 1-ից
ՎՃԱՐՈՒՄ Է՝

Հասարակ ընթացիկ հաշւում	3%
Պայմանաւոր » »	3½%
Դրամական աւանդների ցպահանջ	3%
» » 6 ամիս ժամանակով	4%
» » մի տարով և աւելի	5%

ՎԵՐՑՆՈՒՄ Է՝

Մուրհակներ զեղչի	7%
Սօլօ-մուրհակների զեղչի, որոնք ապահովուած են՝	
ա) Ապրանքներով	7%
բ) Անշարժ կալուածքներով	7½%
% թղթերի գրաւականով որոնք՝	
ա) Ընդունվում են պետական բանկում	6%%
բ) Պետութիւնից ապահովուած չեն	6½%
գ) Չեն ընդունվում պետական բանկում	7½%
Ապրանքների և զանազան ստացագրերի գրաւականով	7%
Փոխառութիւնների ցպահանջ (on call)	6½%
Մասնաւոր ընթացիկ հաշիւներով	
ա) Պետ. բանկ. ընդունուող % թղ. ապահովուած.	6½%
» » չընդունուող » »	7½%
բ) Մուրհակներով ապահովուած	7½%
Տոկոսաբեր արժեթղթերի և կտրոնների զեղճ	7%
Ցանձնարարականներ	$^{1}/_{16}$-ից մինչև 2%

(3—2)

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է
ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ԸՆՏԻՐ ՀԻՒՐԱՆՈՑ
ՕՐԻԱՆՏ
(Hôtel d'Orient)
Հիւրանոցը գտնվում է քաղաքի կենդրոնում, Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, պալատի հանդէպ, տուն Ն. Միրիմանեանի, որ առաջ տեղաւորուած էին դատաստանական ատեանները։ Գեղեցիկ, բոլորովին նոր ՆՕՄԵՐՆԵՐ մէկ ռուբլուց մինչեւ տասնեւհինգ ռուբլի օրական. ամսով ըստ համաձայնութեան։
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՌԵՍՏՕՐԱՆ
Դահլիճ հասարակական հացկերոյթի համար։ Առանձին կաբինէտներ։
Ֆրանսիական, ռուսական և տեղական խոհանոց։
ՃԱՇԵՐ, ԸՆԹՐԻՔՆԵՐ և ՆԱԽՃԱՇԻԿՆԵՐ և յատուկ պատուէրով։
Տեղական, արտասահմանի եւ ռուսաց գինիներ։
(30—8) Հիւրանոցի տէր՝ Ա. ՖՐԱՆՍԻԻՐՕ։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՕՐ"
Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. դրամագլուխ, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում տրուող դրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վելեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքեանի, Ֆեօդոր Ալեքսանդրովիչ Իւանովի բնակարանում։ (100—15)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԳԱՐԵԳԻՆ ՋԻՒԱՆԻ ԼԵՒՈՆԵԱՆԻ
„ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ"
անուն գործը
Պատմական տեսութիւն
ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ
(1794—1894)
Բազմաթիւ ծանօթութիւններով։

(Արժանացած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան 1894 թ. Առաջին Մրցանակին)։
Սոյն երկը բաղկացած է մօտ 600 մեծադիր (երկսիւն) երեսներից։
ԳԻՆԸ 3 Ռ. Է կամ 8 ՖՐԱՆԿ

Դիմել՝ Տփխիս «Կենդրոնական գրավաճառանոց». Ալեքսանդրապոլ՝ հեղինակին, որի հասցէն է՝ Александрополь, Гарекину Левонянцъ, կամ՝ Alexsandrapole (Russie) Garékin Léoniantz. 10—10